

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՑ ԱԿՆԱՐԿ*

Արխագական ԻՍՍՀ սահմաններում ու ԻՍՖՍՀ Կրասնոդարի երկրամասում՝ առանձին ընակավայրերով, ինչպես և արխաղների, ոռանների ու վրացիների հեա խառը, հարյուր տարուց ավելի է, ինչ հաստատվել են տասնյակ հաղարավոր հայեր, որոնց մեծադույն մասի նախնիները համաշխարհային են եղել և որոնք իրենց ստեղծագործ աշխատանքով խթանում են այդ վայրերի անասակա կյանքի ու մշակույթի զարգացմանը։ Սա Սովետական Միության սահմաններում գոյություն ունեցող հայկական ամենախոշոր դաղթօջախն է։

Համառոտ այս ակնարկով փորձելու ենք լուսաբանել համաշխարհային պատմության կարեորագույն դրվագները՝ քննարար օգտագործելով պատմական, աեղագրական ու աղագրական արդեն հայտնի ցաքուցրիվ նյութերը։

Որոշ ուսումնասիրողներ հայտնել են այն տեսակետը, որ Սե ծովի հարավարեելյան ափամերձ շրջաններում հայ էթնիկական տարրն սկսել է հաստատվել տակավին հայ ժողովրդի կազմավորման ամենավաղ շրջաններում։ Մեծ հավանականությամբ ներթափանցման այդ հոսքը շատ ավելի լայն ծավալ է ստացել մ. թ. ա. II—I դդ., երբ հղոր Պոնտական թագավորությունը իր տրոնտեսական ու քաղաքական աղղեցության ոլորտի մեջ էր առել Փոքր Հայքը և Մեծ Հայքի հյուսիսարևմտյան որոշ շրջաններ։ Սնտարակույս, այս տեսակետն ընդունելի է, սակայն անհերքելի փաստեր առայժմ չկան պոնտահայության հին շրջանի պատմական հիշատակները վեր հանելու համար։ Համեմատարար ավելի առաա են տեղեկությունները հաղույաց և Տայոց աշխարհներին հյուսիսից սահմանակից այն տարածքի մասին, որը գտնվում էր Մեծ Հայքի սահմաններից դուրս,

* Այս ակնարկը Լ. Ս. Խաչիկյանի «Էջեր համաշխարհային պատմությունից» (տե՛ս «Բաների Երևանի համալսարանի», 1969, № 2, էջ 115—144) հոդվածի վերափոխված ու համառոտված տարբերակն է, սր տրամագրել է հեղինակը այս պրակում զետեղելու համար՝ ընդառաջելով մատենաշարի խմբագրական կոլեգիայի խնդրանքին։

բայց վաղ միջնադարից սկսած դարձավ զուտ հայարնակ մի շրջան, հայկական իշխաններով կառավարվող։

Համաշխարհային հայկական իշխանության հիմնադրման ստույգ թվականը հնարավոր է լինում որոշել Ղեոնդ պատմիչի հաղորդած տվյալներով։ Ըստ VIII դարի այդ սկզբնադրյուրի, արարական բրոնապետության աակ հեծող հայ ժողովրդի տնտեսական ու իրավական վիճակը հատկապես անտանելի է դառնում 788—790 թվականներին՝ Օբայգուլլահ իրն ալ-Մահդի ոստիկանի ու սրա փոխանորդ՝ Քան դամենեսին ժանտ և շարագործ Սուլեյմանի կառավարչության տարիներին¹։

Սուլեյմանն առաջինն էր արար ոստիկաններից, որ Հայաստանի փոխարքայության նստավայրը տեղափոխեց Պարտավ. նա Դվին ուղարկեց ծագումով հույն հավատուրաց իր փեսային, որը, հարկապահանջներ առաքելով Հայաստանի արարներ շրջանները, ռաստիկ դժնդակությամբ խոշտանդէր զրնակիչա աշխարհին։ Մեկ տարի անց հարկապահանջությունն ու կողոպուտն այնպիսի ծավալ ստացան, որ պատմիչի խոսքերով՝ «յայնմհետէ ոչ ոք էր տէր ընչից իւրոց»։ Շատերը, այլեւ պայքարելու և առկալու ուժ չունենալով, լքում էին իրենց հաղարամյա ընակավայրերը և, հաղթահարելով տիրողների դիմադրությունը, արտագաղթում այլ երկրներ։

Այս տարիներին է. ահա, որ Բյուզանդական կայսրության հյուսիսարեելյան Խալդեա ծայրագավառում՝ Հայաստանից կաղմակերպված արտագաղթի հետեանքով, ստեղծվում է Համշենի

¹ Պատմութիւն Ղեոնդեայ մեծի վարդապետի հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 167—169; Ղեոնդի շարագրանքից այն տպավորությունն է սացվում, թե Օբայգուլլահ ոստիկանը, իբր, հաշորդել է Սուլեյմանին, սակայն Հայաստանի արար ոստիկանների գիտական ժամանակագրությունը վերականգնող Հ. Նալբանդյանը այս երկուսի կառավարչությունը գնում է միեմույն՝ 788—790 թթ., Սուլեյմանին համարելով Օբայգուլլահի կողմից նշանակված փոխանորդ (Տե՛ս նաև՝ «ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր» հաս. գիտ., 1956, № 8, էջ 114)։

հայկական իշխանությունը, որը հարատևում է երկար դարեր և ղեկավարվում հայ ժողովրդի քաղաքական ու մշակութային պատմության մեջ:

Այդ արտագաղթի մասին ուշադրավ են ժամանակակից պատմիչ Ղեոնդի հաղորդած տվյալները, որ մեջ ենք բերում ստորև, աշխարհարար թարգմանությամբ.

«Եվ շատերը, շկարողանալով տանել աղետներին ծանրությունը, կամովին թողնում էին իրենց (անասունների) հոտերն ու արտերը. իսկ թշնամիները գերեզմանում էին անասուններին և ավարառնում նրանց ունեցվածքը: Իսկ ապա, երբ այդպես ունեցվածքից ղուրկ, մերկ և ռոկ և քաղցած մնացին ու չգտան ապրուստի միջոցներ, հեռացնաց ճանապարհ ընկելով՝ փախան, գնացին Հունաց աշխարհ, որոնց (փախչողներին) թիվը, ասում են, եղել է տվելի քան 12 հազար տղամարդ՝ կանանց ու երեխաների հետ միասին: Սրանց առաջնորդներն էին Շապուհը՝ Ամատունյաց տոհմից, նրա որդի Համամը և ուրիշներ հայ նախարարներից ու նրանց հեծյալներից: Եվ անօրեն ու ժանտ թշնամին իր ղորքով հետամուտ լինելով փախչողներին, հասնում է նրանց հրատարակի սահմանում գտնվող Կող գավառում, որտեղ ճակատամարտ առաջացավ փախուստի են մատնում և ումանց էլ սպանում (արարներից), իսկ իրենք անցնում են Ակամսիս (Ճորոխ) դեպք, որ ընկելով Տայքի կողմերում՝ հոսում է հյուսիս-արևմուտքով, անցնելով Եղբերով, թափվում է Պոնտոս (Սև ծով): Եվ երբ անցան դեպք, հունաց կայսր Կոստանդինը շտապ լուր ստանալով կանչեց նրանց, պատիվներ տվեց նախարարներին ու նրանց հեծյալներին, իսկ հասարակ ժողովրդին բնակեցրեց դեղեցիկ ու արդավանդ մի երկրում»²:

Այս անցուղարձերի առիթով, բացի արագադիր գլխավորող Շապուհ և Համամ Ամատունի իշխաններից, հիշատակված են հեաևյալ նշանավոր դեմքերը. Ծսայի Եղիպարուշեցի կաթողիկոսը (775—788), արարական ոստիկան Օրայդուլահան ու նրա փոխանորդ Սուլեյմանը (788—790) և բյուզանդական կայսր Կոստանդին VII-ը (780—797):

Վերը նկարագրված արտագաղթը և Համամի հայկական իշխանության ստեղծումը տեղի է ունեցել Ծսայի կաթողիկոսից (մհ. 788) հետո, Օրայդուլահան ու Սուլեյման ոստիկանների կառավարչության տարիներին, ուստի՝ 789—790 թվականներին:

Արագադիր գլխավորել, արար պաշտոնյա-

ների գլխավորությունը ջախջախել և 12 հազարից ավելի բնակչության համար Բյուզանդական կայսրության տիրապետության ներքո ապահով բնօրրան են ստեղծել Շապուհ և Համամ Ամատունիները և ուրիշ նախարարները Համամն անունն իսկ կապվում է Համամ Ամատունու անվան հետ: Ըստ խառնաշփոթ ու ժամանակավրեպ մի ավանդության (դրանցված այս դեպքերից շուրջ մեկ-երկու հարյուրամյակ հետո) Համամը բնակություն է հաստատել սկզբից Տամրուր կոչվող քաղաքում: Այդ քաղաքը հետագայում գրավվել է Վաղեհան անունով վրաց իշխանի կողմից, որ նենդելով հայերին ու բյուզանդացիներին, դործակցել է արարների հետ ու օղնական ղորք ստացել նրանցից: Համամ իշխանը, որ Վաղեհանի քեռորդին է եղել, մեղադրել է նրան նենգություն ու դավաճանություն մեջ, սակայն ձերբակալվել է ու պատժվել՝ ոտքերի ու ձեռքերի ծալքատումով: Վաղեհանն այնուհետև, ըստ ավանդության, ճառեալ ղպարսիկս (իմա՝ արաբներին), անց ընդ գետն Ճորոխ, և դնաց ի քաղաքն Համամայ, որ կոչի Տամրուր, եհար սրով և հրով և դերեաց գքաղաքն»³:

Այս դեպքերից հետո է, որ Համամ իշխանը ավերված Տամրուրի տեղում կառուցել է մի նոր քաղաք, իր անունով կոչելով Համամաշեն, որ հետագայում սղվելով հնչվել է ու հնչվում է առ այսօր Համաշեն կամ Հեմշին ձևերով:

Որքան էլ վիպական կերպարանք սաացած ու դոմադարդված լինեն Հովհան Մամիկոնյանի կողմից դրանցված կամ նրա անունով մեղ հասած այս տվյալները, նրանցում, անտարակույս, կան իրական գեպքերի արձագանքներ: Ուշագրության արժանի են հատկապես Վաղեհան վրացի իշխանի ու Համամի աղգակցությանն ու բախումներին վերաբերող տեղեկությունները: Դրանք հնարավորություն են ընձեռում խորհելու, որ Շապուհ և Համամ Ամատունիները իրենց ժողովրդին առաջնորդել են լաղիստանի անմատույց շրջաններ՝ նախապես ծանոթ լինելով այդ վայրերին և խնամիական կապեր ունենալով նրանց իշխանների հետ:

Ղեոնդ պատմիչի հաղորդած տվյալները հնարավորություն են ընձեռում ոչ միայն պարզելու Համաշենի հայկական իշխանության հիմնադրման սառույզ ժամանակը՝ 789—790 թթ., այլև որոշելու Հայաստանից արտագաղթած ու Համաշենում հասաատված հայ բնակչության բնօրրանը:

Գիտենք արդեն, որ Համաշեն արտագաղթած հայերի ղեկավարները հայ ժողովրդի պատմու-

² Ղեոնդ, ղլ. ԽԲ, էջ 168—169:

³ Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1951, էջ 284:

թյան մեջ մեծ դեր կատարած Ամատունյաց նախարարական տան պայադատներ էին։ Պատմա-յորական ու վիճադրական աղբյուրներում առկա ակնարկների համադրումով հնարավոր է լինում հանգել անտարակուսելի այն եզրակացության, որ մեղ հետաքրքրող ժամանակաշրջանում Ամատունյաց նախարարության կալվածներն ընկած էին Այրարատյան նահանգի Արագածոտն և Կոտայք գավառներում, կենտրոն ունենալով Օշական նշանավոր ավանը։

Ուստի պարզ է, որ Շապուհ և Համամ Ամատունիների գլխավորությամբ Համշեն ներգաղթած հայ ընակչության ճնշող մեծամասնությունը, լինելով Ամատունյաց հպատակ հեծյալներ ու շինականներ, դուրս էին եկել Հայաստանի սրտից՝ Այրարատյան նահանգից։

Րնականարտը, հետագա դարերում Համշենի լեռնաշխարհը իր անմատչելի ձորագավտուններում պատսպարած պետք է լինի նաև Հայաստանի այլ շրջաններից, մասնավորապես Համշենին սահմանակից Բարձր Հայքի գավառներից արտադարձած նոր խմբերի, սակայն հայկական Համշենի հիմնագրից Շապուհ ու Համամ Ամատունիների գլխավորությամբ արարական լծի դեմ դենք վերցրած և հաղթական պայքարով իրենց համար նոր հայրենիք նվաճած հերոսներ էին։

Անանյանների լեռներով, խոր ձորերով ու խիտ անտառներով, արտաքին աշխարհից կտրված, ինքնամփոփ, մոսթ ու մառախլապատ մի երկրամաս էր Համշենը։ Հեթում պատմիչը, որ XIII դ. վերջերին անձամբ եղել է այնտեղ, հայանում է, թե «տեղին այն այնչափ մառախլապատ է և խաւորչուտ՝ այնպիսի նսեմությամբ, զի ոչ ոք է՝ որ կարից է նշմարել ինչ անգ. և ոչ ոք է՝ որ համարձակեսցի մտանել յայն երկիր, զի ոչ ոք գտանէ շաւիղ գնալոյ ընդ այն»։ Հեթումին լրացնում է իսպանացի դիվանագետ Ռուի Գոնզալեսի գե Կլա-

⁴ Համշենցի հայերը, ինչպես նաև տրապիզոնցիները, զրիմցիները և նրանցից ծագած հայկական ուրիշ գաղթօջախների հրա ընակչությունը ավանդաբար իրեն սերված է համարում Բագրատունյաց Հայաստանի նշանավոր կենտրոն Անի մայրաքաղաքից։

Այս ավանդությունը հաստատող ստույգ փաստեր չեն պահպանվել, սակայն հիմքեր չկան ամբողջապես մերժելու նաև Անիից ներդաղ կատարված լինելու հնարավորությունը։ Փաստվոր այդ քաղաքի ընակչության մի ղեկավար մասը սերտորեն կապված էր միջաղգային առևտրի կարևորագույն հանգուցակետերի, մասնավորապես Տրապիզոնի և Ղրիմի ծովափնյա քաղաքների հետ, ուստի կարող էր նաև Սև ծովի հարավային նավահանգիստային քաղաքներում ստեղծել նախառևտրական հենակետեր, իսկ հետագայում (Անիի տնտեսական անկումից հետո)՝ մշտական ընկալվալիքներ։

⁵ Հեթում պատմիչ թաթարաց, Վենետիկ, 1842, էջ 15։

վիխոն, որ 1406-ի սեպտեմբերին, տունգարձի անապարհին տնցել է Համշենով, մեծարժեք իր «Ուղեգրության» մեջ գրանցելով կարևոր տեղեկություններ այդ երկրասահի դիրքի, պատմության ու ժողովրդի բարքի մասին։

Համշենի աշխտհադրական ու կլիմայական պայմանների, հաղորդակցության միջոցների և հարակից խնդիրների մասին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում նաև XIX դ. օտարադգի և հայ ուղեգիր-տեղագիրները, մասնավորապես Կ. Կոխը, Ս. Հայկունին, Պ. Թումայանցը և ուրիշներ։ Թումայանցն, օրինակ, դրում է. «[Համշենի] ժողովուրդը, այս ամեն շարժարանքը իր երկրին լեռնային դիրքը պատճառով կը կրե, ուր կառք րանել ընականարար անհնարին ըլլալն զատ՝ շատ մը ճանապարհ կոչված տեղերն անգամ ձի և ջորի ալ չ'կրնար րանիլ, որով շինականը արտեն և թե անտառեն ի տուն և թե ի քողաք փոխադրելիք րաները... կը ստիպի շալակով կրել՝ դժվարին և վախվոր ճանապարհներով»։

Թե ինչ երկրամաս գրավեց Շապուհ և Համամ Ամատունիների ղեկավարությամբ Այրարատյան նահանգից արտագաղթած 12 հազար ընակչությունն սկզբնական շրջանում, չգիտենք։ Միջին դարերից ես տեղեկություններ դրեթ չեն պահպանվել (եթե անասենք Համշենի իշխանությունը հարավից Սպերին սահմանակից լինելու մասին ձեռագրական տվյալը՝ XV դարից)։ Ուստի, կամայնք ահամա, դիմելու ենք XIX դ. ուղեգիրների օգնության։

Գերմանացի գիտնական Կարլ Կոխը, որ 1843—1844 թթ. անձամբ տնցել է Համշենով ու գրանցել ճամփորդական ուշագրավ իր տպավորությունները, նկատում է, թե Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող այդ երկրամասը կիսանկախ էր՝ վոյվոդ կոչվող պաշտոնյայի կառավարության ներքո։ Համշենի սանջակի մեջ, րացի կենտրոնական դիրք դրավող րուն Համշենի շրջանից, Կ. Կոխի տվյալներով, մտնում էր երեք ձորապետություն (դերերեյություն), Դրանցից մեկի կենտրոնը եղել է Ջեմիլ գյուղը՝ համանուն գետափին (Կալապոտամոս գետի ա-

⁶ Рюм Гонзалес де Класихо, Дневник путешествия ко двору Тимур в Самарканд в 1403—1406 гг., пер. И. И. Срезневского, СПб., 1881, стр. 382—384.

⁷ Պ. Թումայանց, Պոնտոսի հայերը, «Լուծայ», 1899, Բ գիրք, էջ 164։

⁸ Հայտնի է. և Կ. Կոխն էլ պարզաբանում է. որ վոյվոդ էին կոչվում Օսմանյան կայսրության այն սանջակների կառավարիչները, որոնց վստահված երկրամասի ընակչությունը քրիստոնյա էր, ի տարբերություն մյուսների կոչվածների, որոնք իշխում էին հիմնականում մահմեդական ընակչություն ունեցող շրջանների վրա։

կունքներից), երկրորդի կենտրոնը՝ Օրթաքյոյը՝ Մապաւրա գետի ափին, իսկ երրորդինը՝ Մարմանադ գյուղը՝ Աթենա ծովափնյա դյուղաքաղաքից 2,5 ժամվա հեռավորության վրա⁹։

Համշենի սահմանների մասին ավելի մանրամասն տվյալներ հաղորդում է ռազմարդյուն աղագրադեստ Ս. Հայկունին։ «Համշենի վիճակը,—գրում է նա,—րոնած է Ապերի և Իրիզեի միջավայրն, Ապերից սկսած դեպի մեր երկու հովիտներն կր գրավեն, որ հինավուրց հսկա անտառներով պատած է, և շրջապատված է նաև հսկա լեռներով։ Խաչավանք սարից Թեթևիթ սարի երեսը անցնելու համար մի լճակի եզրից պիտի անցնենք, որ ձկներով առաա է և որի շրջապատը կարելի է կտրել 20 վայրկյանում։ Քյոզցեր լեռան վրա ևս լիճ մի կա, Այդր կյոլ անունով։ Այս լճից երկու գետերու սկզբնավորությունն են, մեն 6 ժամու ճանապարհ Ապերի կողմ հոսելով Ճուրխի կր խառնվի. որը ևս (իմա մյուսը՝ Լ. Խ.) կր հոսի Սև ծով 5 ժամ Իրիզեի արևմտյան կողմից։ Ժեմել գետն արևմտյան կողմը հոսելով կիջնա՝ աշ կողմից Կալապատոմուղի կր խառնվի... բուն Համշեն կր սկսի Յոթը Փարա դյուղից, որ Իրիզեից 24 ժամ րարձր է։ Յոթը-Փարա գյուղից 8 ժամ րարձր է Համշենի Գարադերեն, որ Կալապատոմուղի կր խառնվի։ Մափավրի գետն ևս կր հոսի Աև ծովը Իրիզեից 4 ժամ յարևելս, որն ևս Համշենի լեռներեն կիջնա... վերին Կալե դետակն 2 ժամ րնթացքն հետո՝ արևելյան եզրից Ֆորթունա (Բուք) գետին կր խառնվի։ Չափթոսի մոտ՝ Թեթևիթի հովիտեն անցնելով Ֆորթունան Խաչվանքի սարից կիջնա, Արտաշենից կանցնի, և Ատինտյեն 2 ժամ հարևելս Աև ծովը կր թափի...»¹⁰։

Համշենի բնական պայմանները՝ լեռնային լանդշաֆտ, անսնցանելի ու խիտ անառներ և տյլն, հնարավորություն չեն բնօրոգում ռազմամարդ բնակավայրեր սահդծելու։ Գյուղերն այստեղ, սովորաբար, կաղմված են լինում 20—30, առավելն 50 միմյանցից 1—3 և ավելի կիլոմետր հեռու բնկած տների խմբերից կամ հաա-հաա տներից։ «Գյուղացիին բնակարտներ երր նեդ դա,—գրում է Համշենի մեծավաստակ աղագրադեստը,—կամ քանի եզրայրներ միասին բնակելու խոշընդոտներ հառաջ կդան, իրենց տներն 1—2—3 վերստ հեռու... անտառի հարմարավոր վայրերը կորոշեն տուն շինել, այնպիսի տեղ մի, որ լինի ղառիվայր, տան վերեր իրեն հատուկ անառ...»

⁹ Reise im pontischen Gebirge und turkisch-Armenien, von Prof. Dr. Karl Koch, Weimar, 1846, էջ 22—25 և հտ...

¹⁰ Ս. Հայկունի, Համշեն («Արարատ», 1895, էջ 296)։

տանը շուրջը պտղատու ծառներ տնկելու հարմարություն ունենա» և այլն¹¹։

Աշակելի նոր հողամասերի իրացման հետ կտպված դրեթե անհտղթահարելի դժվարությունները, հնարդույն ժամանակներից սկսած, արտագտդթի ու պանդխտության պաաճառ են հանդիսացել համշենցիների համար։ Նրանք, քայլ առ քայլ դուրս դալով բուն Համշենի սահմաններից, տտրածվել են դրեթե ըողոր ուղղություններով։

Կրկին անդրադառնանք քաղաքական կյտնքի պտտմությտնր։

Տեղեկություններ չկան պարղելու, թե Հտմամ Ամատունի իշխանից հետո Համշենը որքան ժամանակ է մնտցել նրա տոհմի տիրապետությտններքու Կտրող ենք միայն ենթտդրել, որ IX—XI դդ. Հայասաանի, Վրասաանի և Աղվանքի սահմաններում Բադրատունիների հղորտցմտն և անախրնթաց վերելքի այդ ժամանակաշրջանում, Համշենը նույնպես, հարավից սահմանակից լիներով Բադրատունիների հին բնտրան Սպերին, ընկել է նրանց քաղաքական աղդեցության ոլորտի մեջ։ Այս մութ ժամանակահատվածի վրա, կարծես, ադոա լույսի մի ճառաղայթ է նետում համշենցիների միջավայրում մինչև XIX դ. վերջերը պահպանված ավանդությունը՝ թագավորական ցեղից սերված Գրիդոր և Աարաիրոս իշխանների մասին։ Ըստ այդմ, «Մտրտիրոս Գրիդորի աղջիկը կուղե յուր որդույն՝ Արտաշենի համար. Գրիդոր չի հոժարիր տալ. Աարաիրոս ղինու ղորությամբ Գրիդորի երկիրը կր մտնե, կր պաաներաղմի, կր հաղթե, կաոնե աղջիկը, կր պսակե Արտաշենի վրա, Արաաշեն Գրիդորի երկրի մեջ, Համշենի մեծ գետի վերի ակներուն մոտ մի հսկա ըերդ կր կաոուցանե, որ այստ ևս Արտաշեն կասվի»¹²։

Այս ավանդության մեջ պաամտկան է, տնշտւտ, հայ իշխանների միմյանց դեմ մղած պաաներաղմների վերհուշը և, մանավանդ, ուշադրավ այն տվյալը, որ իրար դեմ պատերաղմող հայ այդ իշխանները եդել են «թագավորական ցեղե»։

Պաամաաշխարհադրական այս միջավայրում «թագավորական ցեղ» էին առաջին հերթին Բադրատունիները, որոնք ղենքի ուժով, խնամիական կապեր հասաաանելով և այլ ուղիներով քաղտքական իրենց աղդեցությունը աարածում էին նորանոր շրջանների վրա, մանավանդ Տայքի ու Կղարչրքի աեր Դավիթ Կյուրոպադատի իշխանության տարիներին (961—1001), ինչպես նաև հետագա-

¹¹ Ս. Հայկունի, Տրապիդոնի հայ դյուղադոդ կյանքը («Արարատ», 1905, էջ 789)։

¹² «Արարատ», 1895, էջ 295—297։

յում՝ վրաց Բագրատունիների քաղաքական վերելքի տասնասյակներին։ Այս ժամանակաշրջանից պատմական սառույդ վկայություններ, ցավոք, չեն պահպանվել։

XIII դարի սկզբներին, խաչակրաց 4-րդ արշավանքի հետևանքով մասնաված ու բզկտված Իլուդանդական կայսրության հյուսիսարևելյան շրջաններում ստեղծվեց պետական մի նոր կազմակերպություն՝ Տրապիզոնի կայսրությունը, որը միավորեց հույն, հայ ու վրացի ազգություններով բնակեցված մի շարք շրջաններ և XIII—XIV դարերում նշանակալից դեր կատարեց միջազգային առևտրի ասպարեզում։

Այդ մի ժամանակաշրջան կը, երբ իսլամական րազաք-պետությունները, մասնավորապես Ջենուվան ու Վենետիկը, ներթափանցեցին Սև ծով և առևտրական ֆակտորիաներ ստեղծեցին Ղրիմում և Աղսվի ու Սև ծովերի կովկասյան ափամերձ շրջաններում։ Կաֆան (Թեոդոսիան) արեելյան և արևմտյան երկրների ապրանքափոխանակության նշանավոր հանգուցակետը դարձավ։ Տնտեսական մեծ նշանակություն ստացան նաև Տանան կամ Ազախը՝ Դոնի գետարեհանում, Մաարեզան՝ Թամանի թերակղզում, Կոպան՝ Հյուսիսային Կովկասում, և 30-ից ավելի այն նավահանգիստները, որոնք ստեղծվել էին Սզախից մինչև Սերասաուպոլիս (Սուխում)՝ ընկած ծովափերին։ Ինչպես նկատում են մասնադեաները, բոլոր այս կենտրոններում հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչները կատարում էին կարևորագույն դեր։ Կաֆայի բնակչության երկուերորդը (46 հազար մարդ) հայ էր. հայերը մեծ թիվ էին կազմում նաև մյուս կենտրոններում¹³։

Այս շրջանում Համշենի հայկական իշխանությունը, մասն կազմելով Բյուզանդական իսլադեա (հազտիք) թեմի, կիսանկախ իր դոյությունը պահպանեց Տրապիզոնի կայսրության կազմի մեջ։ Խազարքի դժվարակոխ ճանապարհների ու նրա ռազմատենչ բնակչության մասին 1223 թվականից ունենք պերճախոս մի վկայություն, որը հարևանցիորեն վերարբերում է նաև Համշենին ու նրա քաղաքի զավակներին։ Այդ թվականին ռախվեցին Իկոնիայի սուլթանության ու Տրապիզոնի կայսրության զինական ուժերը։ «Պաամություն սուրբ Ծվդենիոսի հրաշագործությանց» երկի տվյալներով սուլթանը ճամբար դարկեց Բարերդից ոչ հեռու մի վայրում և շրջակա բնակչությունից տեղեկություններ սկսեց քազել Տրապիզոն

տանոզ ճանապարհի մասին. նրան ասացին, որ անհրաժեշտ է շրջանցել խազտիքը, քանի որ այդ թեմը դժվարանցանելի է և ունի ռազմատենչ բնակչություն։ Հետագա դեպքերը եկան հավասանելու այդ տեղեկությունը. խազտիքի և Մացուկա կոչվող շրջանի բնակիչները, տրապիզոնցիների հաջող դիմադրության մասին լուր ստանալով, ոգեշնչվեցին և, ժամանելով դիշերով՝ հալածեցին պահպաններին, թշնամու լանակաանդից քշեցին-տարան պատերազմական ձիերը, հափշաակեցին ու դերեցին։ Խիստ ուշադրավ են, մանավանդ, սկզբնադրուրի հետևյալ տողերը. «Հույները դրավեցին հապճեպ փախուստի հետևանքով թոզնված ձիերն ու դենքրո իսկ հնարավոր է, արդյուք, թվարկել, թե մացուկացիներն ու խազտիքի բնակիչները որքան փախստականներ ջարդեցին Տավրոսի ձորերում»¹⁴։

Խազտիքի բնակիչներն այսանդ խիստ որոշակի աարանջաված են հույներից ու մացուկացիներից։ Հիմք լուսնեք պնդելու, որ խազտիքի բնակիչն ասելով սկզբնադրուրի հեղինակը նկատի է առել միայն և բացառապես Համշենի հայերին (այդպես կարող էր կոչվել նաև Բարերդից հյուսիս)՝ հնում խազտույ ձոր կոչվող շրջանի, ինչպես և Սպերի հայ ազգաբնակչությունը), սակայն կարող ենք լատարկուսել, որ Տրապիզոնի կայսրության ազդեցության ասկ դանվող Համշենի հայկական իշխանությունը, իր հարեանների նման, կիսանկախ դիրք ուներ կայսրության և սուլթանության նկատմամբ, պահպանել էր ռազմատենչ իր ողին և պատրաստ էր ոչ միայն դիմադրելու թշնամի բանակներին, այլև նպաստավոր իրադրությունից օգտվելով՝ նախահարձակ լինելու։

XIV դ. կեսերից Տրապիզոնի կայսրությունը, քայքայման ու մասնամասն անկանդ ընթացքի մեջ մտնելով, մեկը մյուսի ևտից կորցնում էր իր ծայրագավառները, փաստական իշխանություն պահպանելով միայն Տրապիզոն քաղաքի ու մերձակայքի վրա։ 1360-ական թվականներին սյրդեն խազտիքը կայսրության մաս չէր կազմում. այդ տարիներին երկրամասը, հավանաբար Համշենի հետ միասին, դառնում էր արդեն Բարերդի էմիրի գերիշխանության ներքո, որն իր հերթին Ջելաիրյանների, ապա Թեմուրյանների վասալն էր։

Սկզբնադրուրների բազմադարյան լոությունը Համշենի հայկական իշխանության մասին խըզվում է XV դարի սկզբներին, երբ այդ դժվարա-

¹³ Е. С. Зевакин и Н. А. Пенчко, Очерки по истории грузинских колоний на западном Кавказе в XIII и XV вв. (Исторические записки, № 3, 1938).

¹⁴ Ф. И. Успенский, Очерки из истории Трапезундской империи, Л., 1929, стр. 52, 56.

կոխ երկրով անցնում է իսպանացի դիվանագետ Կլավիխոն։ Այնուհետև լեզու են առնում մի քանի հայ իշատակադիրներ, որոնց հաղորդած շորու ցամաք տեղեկություններն ի մի բերելով, հնարավոր է լինում ստվերագծել այդ իշխանության վերջին հարյուրամյակի պատմության հիմնական դրվագները։

Սամարղանդից հայրենիք վերադառնալու ճանապարհին, Ան ծովի նավահանգիստներից որեւէ մեկին հասնելու համար, Կլավիխոն ժամանում է Սպեր, ուր հյուրընկալվում է մահմեդական իշխողի կողմից (սրտն անվանում է Piahacabea)։ Այնուհետև, 1406 թ. սեպտեմբերի 13—15-ին, նա անցնում է Համշենով, այդ երկրի մասին արձանագրելով կարեոր տեղեկություններ. «Այդ գիշեր նրանք (Կլավիխոն և իր ուղեկիցները՝ Լ. Խ.) օթեւլանեցին լեռան ստորոտում գտնվող մի դյուղում։ Հաջորդ օրը՝ կիրակի (սեպտեմբերի 13-ին) րարձրացան անտառադուրկ րարձր լեռը, որն այնքան դառիվեր էր, որ և՛ մարդիկ, և՛ անասունները շարժվում էին մեծ դժվարությամբ։ Այդ օրը նրանք դուրս եկան Գորդանիայից և մտան Առաքել (Arraquel) [կոշվող] երկիրը։ Հաջորդ երկուշաբթի նրանք ճաշեցին այդ Առաքել երկրի մի գյուղում և, անմիջապես մեկնելով, գիշերեցին մի այլ դյուղում։

Ահա պատճառը, որի հետեանքով այդ մահմեդականը (Piahacabea-ն՝ Լ. Խ.) իշխում է [միաժամանակ] Սպերին և այդ Առաքել [կոշվող] երկրին։

Այդ երկրի ընակիչները դժգոհ էին իրենց իշխանից, որին, ինչպես և երկիրը, կոչում էին Առաքել։ Նրանք ուղեորվեցին Ապեր՝ վերոհիշյալ իշխանի մոտ, ասելով, որ նրան կդարձնեն իրենց իշխան, պայմանով, որ նա պաշտպանի իրենց։ Եվ արեցին այդպես՝ հանձնվեցին նրա իշխանությանը։ Նա ընդունեց և իր փոխարեն մի մահմեդական նշանակեց այդ երկրի կառավարման համար, մի քրիստոնյայի ընկերակցությամբ։

Այդ երկրամասը շատ լեռնոտ է, ունի մի քանի լեռնանցներ, որոնցով անկարող են տնցնել կենդանիները։ Որոշ տեղերում ժայռից ժայռ տնցնելու համար՝ փայտե կամուրջ են կապել։ Բեռնակիր կենդանիներն այդ երկրամասում, ըստ մեծի մասի, անկառող են շարժվել և մարդիկ ըստիպված են ամեն ինչ կրել իրենց ուսերին։ Հացահատիկն այնտեղ քիչ է [աճում]։

Այդ լեռներով նրանք շարժվում էին չորս օր, մինչև հասան ծովափնյա մի տուն, որից մինչև Տրապիզոն վեց օրվա ճանապարհ էր։ Այստեղից

նրանք վատ ճանապարհով գնացին մինչև Այուրմենե կոշվող վայրը»¹⁵։

Համշենի պատմության համար կարեոր այս տեղեկությունները կարոտ են մեկնարանության։

Դժվարակոխ ճանապարհներով Սպերից Սյուրմենե հասնելու համար Կլավիխոն, անտարակույս, անցել է Համշենով, սակայն այդ երկիրը նախկին իշխանի անունով կոչել է Առաքել¹⁶։

Ուշադրավ է Կլավիխոյի պատմածն այն մասին, որ Համշենի ընակիչները, դժգոհ լինելով իրենց Առաքել իշխանից, պատգամավորություն են ուղարկում հարևան Սպերի իշխանի մոտ և, որոշ պայմաններ առաջադրելով, կամովին ընդունում նրա դերիշխանությունը։ Այն անվանական է լինում, քանի որ Համշենը կառավարվում է մեկ մահմեդական ու մեկ քրիստոնյա պաշտոնյաների համադորժակցությամբ, և համշենցիներն այնքան անկախ դիրք են դրավում, որ իրենց դերադահ Սպերի իշխանի կողմից մեծ պատվով ընդունված և ճանապարհված դեսպաններին իրենց երկրամասից անցնելու իրավունք են տալիս միայն համապատասխան տուրք ստանալուց հետո։

Համշենի իշխաններն այնքան ուժ ունեին, որ ի վիճակի էին հրաժարվելու Ապերի տիրոջ խնամակալությունից՝ նրա ստանձնած պարտավորությունների թերացման կամ քաղաքական նոր իրադրությունների պայմաններում։ Եվ այդպես էլ կատարվում է. Կլավիխոյի նկարագրած իրավիճակը փոխվում է XV դ. սկզբներին, երբ Լանկեթամուրի մահով ծայր են առնում դահակալական կոիվներ ու երկարատե պայքարից հետո Հայաստանի ու Հյուսիսային Իրանի վրա իրենց տիրապետությունն են հաստատում թուրքմեն Կարակունլուները։


Ատուլդ չդիտենք երբ, րայց, անաարակույս, 1422-ից տարիներ առաջ, Համշենի իշխանու-


¹⁵ Рюм Гонзалеc де Класухо, անգ, էջ 382—384, 2. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 142—143 (Հակոբյանի թարգմանությունը հաջող չէ)։

¹⁶ Այդ մասին աներկրա վկայում է ինքը՝ Կլավիխոն, զբելով. «Այդ երկրի ընակիչները դժգոհ էին իրենց իշխանից, որին, ինչպես և երկիրը, կոչում էին Առաքել»։ Որևէ երկրի անվան փոխարեն նրա իշխողի անունը կամ տիտղոսն օգտագործելու դեպքերը եղակի չեն միջնադարյան մասնագրության մեջ։ Պարսկական ու հայկական սկզբնաղբյուրներում, օրինակ, Գուսել է կոչվել Նահաստանը՝ լեհ թագավորի Կառու տիտղոսից, կամ էլ Ջուվեյնին Գույսուկ եաքանի թագազրման հանդեսին ներկա հյուրերի շարքում հիշատակել է «թագավոր երկրի սուլթանին», այսինքն հայերեն թագավոր րաոր (իմա՝ Կիլիկյան Հայաստանի թագավոր) ընկալել և որպես երկրի անուն, ճիշտ այնպես, ինչպես Կլավիխոն Համշենի փոխարեն ավել է այդ երկրի իշխան Առաքելի անունը։

ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐ ԵՎ ՊՈՆՏԱՀԱՅԵՐ
(ԲՆԱԿԱԿԱՅՐԵՐԻ ՄՈՏԱԿՈՐ ՍՈՒՄԱ ՏԻԿ ՔԱՐՏԵԶ ԸՍՏ 1915թ ԿԻՃԱԿԻ)

ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐ ԵՎ ՊՈՆՏԱՀԱՅԵՐ
(ԲՆԱԿԱԿԱՅՐԵՐԻ ՄՈՏԱԿՈՐ ՍՈՒՄԱ ՏԻԿ ՔԱՐՏԵԶ ԸՍՏ 1915թ ԿԻՃԱԿԻ)





թյունն անցնում է կրկին մեղ արդեն ծաւոթ Առա-
բւի, կամ նրա գերդաստանից սերած համանուն
մի այլ իշխանի ձեռքը: Այդ մասին անդեկություն
/, պրանցված Երուսաղեմի Հայոց պատրիարքու-
թյան գրաւան Ք 1617 ձեռագրի մի հիշատակա-
գրության մեջ, որի համաձայն ձեռագրի սկզբի
մասն ընդօրինակվել է Համշենի Քոշտենց վան-
քում՝ 1422 թ. «ի խնդրոյ պարոնաց պարոն Առա-
քելին»¹⁷:

Երեք աարի անց՝ 1425 թ., Համշենի պարոն է
կոչվում Դավիթ իշխանը, հավանաբար նախորդի
որդին. այդպես ենք կարծում, որովհետեւ նրա մե-
րաբերյալ տեղեկությունը նույնպես դրանցված է
Առաքել իշխանին պատկանած վերոհիշյալ ձե-
սագրի մեջ՝ նրա վերջին մասում. «Գրեցաւ զիրաւ...
յաղագս խնդրոյ պարոնաց պարոն Դավթի... ի
դրան սուրբ Աստուածածնի, որ կուի Քոշտենց
վանք, ի դաւառն ի Համշինու, հայրապետութեանն
տէր Պաւղոսի, թաղաւորութեանն Սքանդար պա-
կին, պարոնութեանն պարոն Դավթին»¹⁸:

XV դարի առաջին հիսնամյակում՝ Սքանդար
կարա-կոյունլուի և նրա հաջորդ Ջհանշահի իշ-
խանության ասրիներին, երբ ըովանդակ Հայաս-
տանի վրա իրենց տիրապետությունը ասրածելու
համար հարատեւ բախումների մեջ էին Աղ-կոյուն-
լու և Կարա-կոյունլու թուրքմենական ցեղախմբ-
երը, վերջիններիս համար փակ էր Երզնկայի
վրայով Սե ծովի ափերը (Տըապիդոն և այլ նա-
վահանդիստներ) ասանդ միջադղային առևտրի
մայրուղին: Այս պայմաններում Կարա-կոյունլու-
ների դերիշխանությունը ճանաչած Համշենի հայ-
կական իշխանությունը, հակառակ իր դժվարա-
կոխ անցուղիների, ավելի ըանուկ ճանապարհ էր
դարձել:

Երթեկող առեարականների համար կյանքի
ու դուլքի ապահովություն ստեղծելու և կայուն
մաքսաաւորքեր սահմանելու խնդիրը, ընականա-
բար, մտահոգելու էր Սե ծովով կատարվող մի-
ջադղային առևտրի մեջ ներդրաված վաճառա-
կաններին: Դրանցից մեկն էր, անշուշտ, հայ մե-
ծահարուստ խոշա Շամշադինը, որը 1431 թ. վե-
րակառուցեց Տրապիզոնի Հայոց Չարխափան եկե-

ղեցին, իսկ մեկ տարի հետո, Կաֆալից ոչ հետո
գտնվող սուրբ Անտոնի վանքում, գրել տվեց Ն.
Շնորհալու բանաստեղծությունների ձեռագիր մի
ժողովածու¹⁹:

Եվ ահա, Համշենի իշխաններ Առաքելին ու
Դավթին պատկանող վերոհիշյալ ձեռագրի մեջ,
դրանցվել է այս խոշա Շամշադինի՝ Համշենի տեր
պարոն Դավթին ուղղված մի նամակը, որը պատ-
մական կարեոր փաստաթուղթ է՝ արժանի մեջ-
բերման առանց սղումների:

«Յանուն Աստուծոյ և սուրբ Նիկողայոսի. պա-
րոն Դավթ՝ յառաջն դուն զայս ուխտէ Աստուծոյ,
որ ճամփորթ(ի) համար լաւ լինաս ու ղճամփորթի
ապրանքն հանց պահես որպէս զաստուծոյ տված
հողիդ, ով որ լինա՝ թէ քրիստոնեա և թէ այլազգ,
ատ քեզ աւանդ: Եւ զինչ քեզ ես Շամշադինս ա-
ւանդ ղենեմ՝ զայն առնուա, այլ աւելի տամահու-
թիւն չլինայ: Վրայ այս բանիս դիէ մօտ ի Սպերու
տէրն, որ բռն բեռ բռնէ, թամպալիթ՝ թամպալիթ,
իլուման՝ իլումայ, խուրճին՝ խուրճի, պողչան՝ պող-
չայ: Եւ բեռին աալիքն ընդ սաղվաթ ընդ ամեն
խարճ մինչև Բասենու սինօոն՝ ղան որ պիտ առ-
նուն՝ ղան յիստակ դրեն որ (թա)մահ և ստու-
թիւն չլինայ ի մէջն»²⁰:

Հանձնարարական այս նամակի ըովանդակու-
թյունը կարելի է ամփոփել երկու կետով:

1. Խոշա Շամշադինը հորդորում է Դավթի
իշխանին՝ Համշենով անցնող վաճառականներից
(ճամփորդ), լինեն նրանք քրիստոնյա, թե մահ-
մեդական, դանձել չափավոր մաքս ու պայման-
ներ ստեղծել, որ նրանց ապրանքներն անկորուստ
մնան իր իշխանության սահմաններում:

2. Խորհուրդ է տալիս հատուկ դրությամբ դի-
մել Սպերի տիրոջը և հորդորել, որ նա որոշա-
կի դարձնի Սպերի ճանապարհներով փոխադրվող
բեռների փոխադրավարձն ու մաքսաաւորքը, որ-
պեսդի «թամահ և ստութիւն չլինայ ի մէջն»:

Հսա ինքյան հետաքրքրական այս նամակը

¹⁷ «Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»,
մասն Ա, էջ 344: Այսուհետեւ Ժն դարի հիշատակարանների
մեր հրատարակած I, II և III մասերը վկայակոչում ենք
Ժն, I (կամ՝ II, III) համառոտությամբ:

¹⁸ Ժն, III, 365: Երուսաղեմի Ք 1617 ձեռագրի Առա-
քել իշխանի պատվերով ընդօրինակված ըստինը (ձեռագրի
սկզբի մասը) պարունակում է Գր. Տաթևացու Քարոզգիրքը,
իսկ Դավիթ իշխանի խնդրանքով ընդօրինակվածը՝ «Վասն
թագաւորելոյ Թէոդոսի» խորագրով առասպելախառն մի պատ-
մություն:

¹⁹ Խոշա Շամշադինի մասին տե՛ս Մ. Բժշկյան, Պատմու-
թիւն Պոնտոսի, որ է Սեաւ ծով, Վենետիկ, 1819, էջ 81: 2.
Տաշլան, Ցուցակ, էջ 1016: Այս աղբյուրներում հիշատակված
Շամշադիներին 2. Աճառյանը ներկայացրել է որպես երկու
տարբեր անձնավորություններ (Հայոց անձնանունների բա-
ռարան, հ. Գ, էջ 141). մենք նույնացնում ենք, նկատի ունե-
նալով, որ երկու գեպքում էլ նա հիշատակված է իր նաչա-
տուր որդու հետ: Հավանաբար, այս Շամշադինի ազգական-
ներից է՝ նաև խոշա Ատեփանոսը՝ կոչված «Շէմէտլի», որ
կառուցել է Տրապիզոնի Հայոց Ամենափրկիչ վանքը (Մ.
Բժշկյան, նշվ. աշխ., էջ 82):

²⁰ Ժն, I, 345: Այստեղ թվարկված՝ բեռ, թամպալիթ,
իլումա, խուրճի, պողչա տերմինների աակ պեաք է հասկա-
նալ Համշենի արահետներով գեպի Սե ծով ու հակառակ
ուղղությամբ տարվող ապրանքների տարրեր շափերը:

հուշում է մեզ, որ Դավիթ իշխանը Իսքանդար կարա-կոյունլուի թագավորության ասորիներին (1422—1437) մեծ հեղինակություն վայելող ու գորավոր մի ավաասան է եղել, ի վիճակի նույնիսկ խրաանեք աալու իր հարեան Սպերի իշխանին:

Դավիթ Համշենցու մասին անդեկություններ ունենք նաև 1440 թվականից, երբ նա, իր ղեկավարությամբ Վարդի հեա միասին, շարունակում էր իշխել իր հայրենի երկրին: Սյդ վկայությունը պահպանվել է Մաշաոցի անվան Մասենադարանի № 7263 ձեռագրում: «Արդ,— ասված է այնտեղ,— ի յանկ եղեալ արաանցաւ Մաշդոցս ձեռամբ անիմասա և անարհեսա դրչի Աստուածաաուր աբեղի, ի դաւառիս որ կոչի Համշէն, և ի վանքս հուժկա, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և կենսակիր աստուածորնդս սուրբ Աշխատացս, ի թուականութեանս յարեղական աումարիս ՊԶԹ (1440), հոռի ամսոյ Բ (2), ի պարոնութեանս պարոն Դօթի (իմա՝ Դաւթի՝ Լ. Խ.) և ղեռարոյս դաւակին իւրո զարոն Վարդին, ղոր Աստուած ընդ երկայն աուրս արասցէ, ամէն»²¹:

Երկու ասանամյակ հետո Համշենի հայկական իշխանությունը ծանր կացության մեջ է ընկնում: Երուսաղեմի № 3701 ձեռագրի մեջ ընդօրինակված ժամանակագրության անծանոթ հեղինակը ԶԹ (1460) թվականի աակ դրանցել է այսպիսի աոդեր. «Եւ յայսմ ամի զՎէքէ մանուկն, զորդի պարոն Վարդին, զաէրն Համշինու ըմբռնեաց Շահալին, եւ ետ ի ձեռն Սօֆուն, որ Շէխ կոչէին»²²:

Այս անդեկության համաձայն, 1440—1460 թթ. ընթացքում վախճանվել են ինչպես պարոն Դավիթը, այնպես էլ 1440-ին «գեռարոյս» կոչված նրա Վարդ որդին: Ահա այս Վարդի «մանկահասակ» ժառանգ Վեքե իշխանի մասին է վերոհիշյալ ավայր. նա 1460-ին, լինելով Համշենի տեր, պարաություն է կրել Շահալի կոչվող մեկի կողմից, ձերբակալվել ու հանձնվել «ի ձեռն Սօֆուն, որ Շէխ կոչէին», այսինքն՝ Արդարիշում նսաող զղրաշ ցեղերի առաջնորդ Սեֆյան շեյխ Հայդարին (1456—1488):

Վեքե Համշենցուն պարաության մասնած Շահալին, հավանարար, զղրաշ աղանդին պաականող Փռոնակ ցեղի առաջնորդն էր, որ հարձակումներ էր դործում հյուսիսային Հայաստանի և Վրաստանի վրա, թալանում ու զերեվարում բնակչությունը²³:

²¹ ԺԵ, I, 510:

²² Մեծարժեք այս ժամանակագրության հեղինակը Սամուել Անեցու անանուն շարունակողներից է. հաղորդում է ուշագրավ շատ անդեկություններ:

²³ Մի հայ հիշատակագիր այս Շահալի մասին ղրել է.

Պաաանի Վեքեի զերությամբ Համշենի հայկական իշխանությունը չի դադարում գոյություն ունենալուց. նրան հաջորդում է Դավիթ անունով մի իշխան, որ, հավանաբար, որդին էր Վարդ իշխանի, եղբայրը Վեքեի, ու Դավիթ էր կոչվել իր պապի անունով:

Յոթ հարյուրամյակ դոյաաեած Համշենի հայկական իշխանությանը վերջ է տրվում 1489 թվականին կամ դրանից մեկ-երկու տարի աոաջ: Ողբերգական այդ դեպքի մասին պահպանված արժեքավոր հիշատակարանի հետ ծանոթանալուց աոաջ վերհիշենք, որ 1453 թ. Կոստանզնուպոլսի գրավումից հետո, օսմանյան թուրքերը, ամենուրեք սարսափ տարածելով, նվաճումներ էին կաաարում Փոքր Ասիայում ու եվրոպական մայրցամաքում: 1458-ին նրանք գրավեցին Աթենական հերցոգությունը, 1459-ին՝ Սերբիան, 1460-ին՝ Մոքեան, 1461-ի հոկտեմբերին՝ Բյուղանդական երեմնի հղոր կայսրության վերջին հիշատակը՝ Տրապիզոնի կայսրությունը: Քիչ անց թուրքերը հասաաավում են նաև Լեսրոս կղզում, Բոսնիայում, Ղարամանիայում, իսկ 1475-ին գրավում են Ղրիմ թերակղզին, որ մեծաքանակ հայ բնակչություն ունենալու պաաճաոոով եվրոպական որոշ աղբյուրներում կոչվում էր «Ծովային Հայասաաան»:

Համշենի հայկական իշխանության վախճանի մասին վերոհիշյալ հիշատակարանում դրանցված են հաաաքքրական տեղեկություններ.

«...Զորոյ աեսեալ պայծաոութիւն Աեաարաիս այս Դրիդոր երէցս և ետ դաղափարել զսա ի ձեռն քահանայի՝ անարժան սարկաւադի և փանաքի դրչի: Եւ ժամանակս վերջին, որ էր թուականս Հայոց ԶԼԸ (1489), ի վերադիաողութեան Հայոց տեառն Սարգսի. և Յոհաննէսի, և վերականութեանն Գրիդոր վարդապետի, և իշխաեաութեանն պառոն Դաւթի, որ էր տէր Համշէնի, զոր եղև պաեղխաաեալ նմա և բեալիլ ի յերկիրս Սպերու, ի յազգէն շիթախիւն, ղոր շաա քրիսաոնեա իշխանք և թագաւորք պանդուխա եղեն ի յաւարութիւն ի ձեռաց նոցա, ղորոց զսուրս նոցա ասաուած խորաակեսցէ ամենաղաւր աջովն իւրով, ամէն»:

Զոր և ես՝ մեղսամած և անիմասա դրիշս զրեցի զսա ի պանդխաութեան մերում ի երկիրս Սպերու, ի դեաւղս Կոռնկանց, ընդ հովանեաւ սըրրոյն Դաւթի, իշխանութեանն աաճկաց Դաաային,

«Վա՛յ ահագին լալի և կոճեկի աուրն, որ ի մեղացն Աստուած հաշտեցաւ և յեա գերել զՏփլիս ի ձեռն անաւրէն և անիրաւ Փռոնակ Շահալին. երկու եղբայրս ղերեցան...» («Ճոցակ հայերէն ձեազրաց Նիկոմիդիոյ և շրջակայից», Վենետիկ, 1969, էջ 21):


և սուլթանութեանն Սադուպին, որ տիրէր տանս Արեւելից»²⁴:

Մեծարժեք այս հիշատակարանի համաձայն, Համշենի անբաժան Դավիթը, պարտութիւն կրելով թուրքերից, թողել էր հայրենի իր երկիրը և պատսպարվել Սպերի դավաճո՞ւմ՝ 1489-ից աւաջ, ըստ որոշակի որ թվականին՝ շփոթեց: Պարզ չէ նաև, թե իր տիրույթից վտարված իշխանը, ձեռագիրն ընթերցանելով գրչի նման, հաստատվել էր Սպերի Կորնկանց գյուղո՞ւմ, թե՞ մի այլ ընտանիքում (հարկավ՝ ազգակցական կապ ունենալով անդի հայ ավաաաների հետ կամ էլ որոշ կալվածքների անբաժանելի ալդ շրջանում): Պետք չէ մոռանալ, որ Համշենին հաջորդից սահմանակից Սպերի ու Բարեբրդի դավաճները մեղ հետաքրքրող ժամանակաշրջանում, ինչպես և նրանից առաջ ու հետո, դուռ հայարնակ էին: Հակոր Կարնեցի տեղագիրը Բարեբրդի դավաճը կոչում է Քաղցր և համեղ երկիր և հայոց ընտանիքն, իսկ Սպերի մասին գրում՝ «բնակիչք երկրին՝ բովանդակ հայք»²⁵: Այս դավաճները XV դարի ընթացքում քանիցս պատերազմական գործողութիւնների ասպարեղ դարձան: Բնակիչները կողոպտվեցին, գերեվարվեցին ու ըստում տառապանքներ կրեցին նախ թուրքմենական ցեղերի հարսան րախումների շրջանում, ապա Սղկոյունլու փաղիշահ Ուղուն-Հասանի (1468—1478) և օսմանյան սուլթան Մուհամմադ Բ Յաթիհի (1451—1481), իսկ հետագայում նաև օսմանյան ու սեֆյան դահականների միջև մղվող արյունահեղ պատերազմների ժամանակ:

Դավիթ Համշենցու անարդարութիւն արեւելքին Սպերի դավաճը դանվում էր դեռևս Յադուր փաղիշահի (1478—1490) իշխանութիւն անբո, սակայն թուրքերը, իրադրոծելով իրենց նվաճողական ծրագրերը, քալլ առ քալլ առաջ էին շարժվում՝ նորանոր երկրամասեր կցելով իրենց կայսրութիւնը: Համշենի հայկական իշխանութիւնը որպես քաղաքական ինքնուրույն միավոր դադարեց գոյութիւն ունենալուց 1489 թ. մեկ-երկու արի առաջ՝ դրավճելով թուրքերի կողմից, որոնք այդ դեպքն արձանագրող հիշատակագրի կողմից կոչված են շիթաղ²⁶:

Այժմ ի մի բերենք Համշենի հայ իշխանների հաջորդականութիւն մասին XV դարից մեղ հա-

սած տվյալները, որոնց համադրութիւմը սաացվում է հետևյալ պատկերը.



Մեծ հավանականութիւն Համշենի իշխանական ան պայադատներից էր նաև XV դ. երկրորդ հիսնամյակի ականավոր դիտնական-մանկավարժ Հովհաննես Համշենցի բարոնապետը, որը եղել է Գրիգոր Տաթևացու սան Դանիել վարդապետի աշակերտը, ուստի դասախարակվել է միշնադարյան Հայաստանի ամենանշանավոր րարձարգույն ուսումնական հաստատութիւն՝ Տաթևի համալսարանի դիտական ավանդույթներով: Վարդապետական դավադան ստանալուց հետո Հովհաննես Համշենցին հաստատվել է Սրղնկայի մոտակայքում գտնվող Ավաղ վանքում, որը դարեր շարունակ մեծ դեր է կատարել հայ դպրութիւն ու ձեռագրական մշակութի դարդացման գործում: 1463 թվականից անդեկուցիւն ունենք նրա մասին՝ որպես առատաշնորհ երշանիկ բարունապետ, որի մոտ ուսանելու էին եկել Հայաստանի արերեր շրջաններից ու հայկական դաթավայրերից (Հաղրաա, Տարոն, Դարանադյաց գավառ, Սերասաիա, Տիվրիկ, Տրապիզոն, Ղրիմ) բաղմաթիվ աշակերաններ,—«անձինք Լ. (30)՝ արք պարկեշտք և զովելիք»:

Զդիտենք, թե մինչև որ թվականն է Հովհաննես բարոնապետը մնացել այստեղ: Ստույղ է, սակայն, որ 1489-ին արդեն նրա դիտավորած համալսարանը անդափովել էր Կապոսի կողմից սուրբ Հակոբի վանքը: Վերհիշելով, որ հենց այդ թվականից մեկ-երկու արի առաջ թուրքերը

²⁴ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 7638, էջ 314ր.—315ա (հմտ. ԺԵ, III, 470):

²⁵ «Մանր ժամանակագրութիւններ XIII—XVIII դդ.», հ. 2, կազմից Վ. Հակոբյան, 1956, էջ 553:

²⁶ XV—XVI դարերի հայկական սկզբնաղբուրներում բազմիցս հանդիպում ենք այդ (շիթաղ կամ շիթախ) տերմինին՝ օսմանցի թուրք իմաստով:

Համշենից վտարեցին Դավիթ Բ իշխանին, ակամա մտածում ենք, որ այդ տեղափոխությունը ինչ-որ ներքին առնչություն ունի Դավիթ Համշենցու իշխանագուրկ լինելու հետ։ Բերես Ավագ վանքի համալսարանի տնտեսական կարիքների մի մասը հոգում էր ինքը՝ Հովհաննես իշխանադուռն-բարունապետը, իր հարադասների ձեռնտվությամբ։ Համշենցի վարդապետը կնքեց իր մահկանացուն 1497-ին, և մինչև կյանքի վերջին օրերը գլխավորեց նշանավոր ուսումնական այդ հասաառությունը։ Իր աշակերտների համար նա մեկնարանում էր աստվածարանական-իմաստասիրական լուրջ երկեր, որոնց շարքում կարևոր տեղ էին զբաղում Գրիգոր Նյուսացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նաղիանդացու գրվածքները, «Մեկնութիւն սուրբ գրեանց» կոչվող ուշադրավ բնագիրը և այլ աշխատություններ։

Միջնադարյան Համշենի մշակույթի ամենաակնառու ներկայացուցիչ Հովհաննես րաբունապետը դիտամանկավարժական իր գործունեությունը ծավալել էր հիմնականում Համշենից գուրու Բուն Համշենի իշխանություն սահմաններում ևս XV—XVI դարերում եղել են վանական հաստատություններ ու դրչություն կենտրոններ, որոնցում աշխատող րանիմաց ու դրագեա դրիչները բազմացրել են արժեքավոր ձեռագրեր և աշխատել մշակույթի այլ բնագավառներում։

Միջնադարյան Հայաստանի վանական հասաառությունների պատմության վաստակաշատ ուսումնասիրող Հ. Ոսկյանին հայտնի է Համշենի սահմաններում գտնվող երեք վանք՝ հաշեքարի կամ հաշեքարի, Սուրբ հաշիկ հոր և վարչամակի կամ վարսամպեկի²⁷։

Ուշադիր ընդգնահանելով վանական այս հաստատությունների մասին առկա հին ու նոր աղյուսները՝ գալիս ենք այն համոզման, որ Եղնովիտ գյուղի մոտ գտնվող «Սուրբ հաշիկ հորն հոգեվորի» կոչված վանքը՝ նույն «հաշեքարոյ» վանքն է։ Կարծում ենք նաև, որ «հաշիկ հայր» անունն իսկ, ժողովրդական ստուգարանությամբ, ծագել է հաշեքար-հաշար (ճաներեն՝ Կաշկարի)²⁸ լեռնագագաթի անունից։ Կովկասի և Փոքր Ասիայի 10 վերստանոց ուսական քարտեղի վրա Կաշկար են կոչված Պարսիսարյան լեռնաշղթայի երկու ասարբեր գագաթներ. այն, որից սկիզբ է առնում Յորթունա գետի Կաշկար-սու վտակը՝ կոչված է վարսամբեկ-Կաշգար, իսկ մյուսը, որ գտնվում է սրա-

նից շուրջ 28 կմ հյուսիս-արևելք՝ կոչված է միայն Կաշգար։ Կարծում ենք, ուստի, որ վարչամակ կամ վարսամբեկ կոչված վանքը նույն հաշեքարի կամ Սուրբ հաշիկ հոր վանքն է. որ կոչված է այդպես հաշար (Կաշկարի) լեռնագագաթի վարսամբեկ անունով։ Քրիստոսի վարչամակի այնանդ պահվելու առասպելը, որի մասին խոսում է Ղ. Ալիշանը²⁹, հավանաբար հորինվել է վերոհիշյալ լեռնագագաթի անունը միտումնավոր ստուգարանելու ճանապարհով։

Ամփոփելով այս աղյուսները, հանգում ենք այն եզրակացության, որ վերոհիշյալ երեք տարբեր անունների տակ թաքնված է Համշենի միջնադարյան մշակույթի միեկնույն կենտրոնը՝ հաշեքարի վանքը, որ հետագայում կոչվել է նաև հաշիկ հոր վանք, ինչպես նաև վարսամպեկ-վարչամակ։ Վանքը դանվել է Եղնովիտ գյուղի մոտ. «Ընդ հովանեալ սուրբ Ասատուածածնիս և սուրբ Սիրվնի և սուրբ հաշիկ հորն հոգեորի և սուրբ վարդանանցս, որ ասա կան հաւաքեալ ի պահպանութիւն երկրիս և դաւառիս մերոյ (Համշենու)»,—այսպես է գրել Կարապետ երեցը իր բնգործական ձեռնարական թժշկարանի հիշատակարանում³⁰։

Վերոհիշյալ Կարապետը բազմադյուն գրիչ է եղել. մեղ են հասել 1499—1528 թթ. բնթացքում՝ նույն Եղնովիտ գյուղում նրա բնգործական հեանյալ ձեռագրերը՝ Բժշկարան, տարբեր նյութերի մի ժողովածու, Տոնացույց-Ավետարանացույց, Ն. Շնորհալու «Յիսուս որդի», 2 Մաշտոց, 3 Շարականց։ Մի այլ գրիչ՝ Հովհաննես Մալաղ անունով, 1517-ին բնգործական է Բժշկարան, իսկ 1523-ին՝ Ավետարան³¹։

հաշեքարի վանքը, ըստ երեույթին, Համշենի վանական հասաառություններից ամենանշանավորն էր, բայց ոչ միակը։ XV դ. կեսերին այնտեղ եղել է երկու այլ վանք ևս՝ Քոշանց և Խուժկա վանքերը, որոնց մասին Հ. Ոսկյանը աեղեկություն չունի։ Սրանցից առաջինում (Քոշտենց վանքում), ի վայելումն Համշենի իշխաններ Առաքելի ու Դավթի, 1422—1425 թթ. հաշատուր գրիչն բնգործական էր մեղ արդեն ծանոթ ձեռագիրը³²։

²⁹ Ղ. Ալիշանը գրում է. «Համշեն, որ է Պաշ Համշեն կալ ի ստորոտս Տէմիրտաղ լեռին, առ որով և հաշեքար լեռն, յորում մենաստան հին, ուր պահելին նշխարք վարդանանց, ի գագաթան նորին աւանգի պահել վարչամակին Բրիստոսի, վասն որոյ լեռն վարչամակ կոչեցաւ և ի ուսմկաց վարսամպէկ» («Տեղագիր Հայոց Մեծաց», Վենետիկ, 1855, էջ 39)։

³⁰ ԺԵ, III, 288.

³¹ Հ. Ոսկյան, աշգ. աշխ., էջ 185—189։

³² Երուսաղեմ, ձեռ. № 1617։ Հիշատակարանում գրված

²⁷ Հ. Ոսկյան, Բարձր Հայքի վանքերը, էջ 183—189, 199.
²⁸ Н. Я. Марр, Из поездки в Турецкий Лазистак (впечатления и наблюдения), «Известия императорской Академии наук», 1910, стр. 608.

խոժկա վանքը հայտնի է 1440 թ., երբ ալստեղ Աստվածատուր զրչի ձևը ունակվել է Մաշտոց՝ «ընդ հովանեաւ սուրբ Աստուածածինն ե կենսակիր աստուածորնկալ սուրբ նշանացս»³⁴։

Զպետք է տարակուսել, որ Համշենում ռստեղծվել են նաե հարյուրավոր ուրիշ ձեռագրեր, որոնք, սակայն, վերջին հարյուրամյակների ընթացքում ոչնչացվել են ըստ բարձրագույն տիրապետողների կողմից, կամ դեռեւ հայտնի չեն դիտական աշխարհին³⁴։

Համշենի հայկական իշխանության սահմաններից դուրս՝ պատմական Հայաստանի մշակութային այլ հաստատություններում եւ աշխտեւ ու սանդղագործել են ըստ մաթիմ համշենցիներու Առաջմ մեզ հայտնի են դրանցից մի քանիսի անունները, որ նշում ենք ստորեւ

Հովհաննես եպիսկոպոս Համշենցի. սա 1401 թ. շարագրել է ըստածո մի հիշատակարան, այսպիսի սկսվածքով.

Ձսակաւ գիտս գրեցի
Եպիսկոպոսը Համշինցի,
Այս անպիտանս յամենայնի,
Որ ծովանէս անունս կոչի,
Յաւաթ չեղեալ յայս աշխարհի՝
Դառն և գծեալ եւ անրարի,
Միայն փութով ի շար գիմի
Եւ ի բարոյն յոյժ հեռարցի...³⁵

Հայտնի է նաե Հակոբ Համշենցի անունով գրիչը, որ 1428-ին շարագրել է դարձյալ ըստածո մի հիշատակարան.

Յակոբ ծառայ անպիտանի,
Որ յիշելոյ չի՞նք արժանի,
Ձի եմ ընական եւ Համշենցի,
Որ ընաւ բարութիւն (չունի)³⁶...

Այս ե նախորդ հիշատակագիրները հեղինակել են, անշուշտ, ե այլ գրվածքներ. մեջ ընդված քառյակները վկայում են ըստածո տողեր հորինելու նրանց հմտության մասին։

Մի այլ համշենցի գրիչ՝ Մովսես աբեղան,

է. «Գրեցաւ գիրքս... ձեռամբ մեղաւոր և անարժան եւալատու արեղի, յաղագս խնդրոյ պարոնաց պարոն Դաւթի... ի դրան սուրբ Աստուածածնի, որ կոչի Քոշանց վանք, ի գաւառն ի Համշինու» (ԺԵ, III, 365)։

³³ ԺԵ, I, 510։

³⁴ Ա. Հայկունին հայտնում է. որ «Այս երկիրը մաթող հայք կը հավատացնեն, թե ըստմաթիմ տներու մեջ տեսած են եկեղեցական հին անոթներ, որը իրրեւ նվիրական կամ սրբություն մի պահած են, այլև ուրիշ հնություններ՝ ձեռագիրներ և այլն, որ ինձ շատ հավատալի է, նորա համար, որ հավատարիմ անձերե լսած եմ» («Արարաւ», 1895, էջ 297)։

³⁵ ԺԵ, I, 18—19։

³⁶ ԺԵ, III, 368—369։

Խաղտյաց դավառի Բերդակա վանքում, XV դ. 70-ական թվականներին ընդորինակել է Ավետարան³⁷։

Համշենի գրչության առանձնատկութունների ուսումնասիրության համար որոշակի արժեք ունի նաե Մատենադարանի № 7056 ձեռագիրը, որ զեղեցիկ մանրանկարներով զարդարված ե երաժշտական խաղերով օժտված մի Շարակնոց է։ Այն ընդորինակել է 1506-ին, Կողոնիայի շրջանում, Հայրապետ կրոնավորը՝ «ի Համամաշէն գաւառոյ»։ Համշենի մշակութային դործիչների այս ցանկը, վստահ ենք, որ լրացվելու է հայերեն հազարավոր ձեռագրերի հիշատակարաններից ըստված նոր անուններով։

Համշենահայերի մշակույթին նվիրված էջը փակելուց առաջ մի երկու խոսքով պետք է անդրադառնալ նրանց բանավոր դրականությանը, որ մեղվաջան ըստհամալսեր Ս. Հակունու, Գ. Սրվանձայանի ե այլոց ջանքերով՝ համեմատաբար լավ է ուսումնասիրված³⁸։

«Երկրի գրից ընական պատճառներով» դարեր շարունակ ինքնամիտփ կյանք վարելով, համշենահայերը պահպանել են իրենց ընաշխարհի լեռների ու ձորերի, զյուղերի ու շեների հայկական անունները, նրանց դավառարարառում կան տանյակ ու հարյուրավոր դուտ հայերեն բառեր կենդանական ու ըուսական աշխարհի տարբեր նմուշների մասին։ Համշենցի հայր, քրիստոնյա թե՛ մահմեդական, պահպանել է նաե իր հնամենի ժողովրդական երգը, առածներն ու հանելուկները, դվարձալի պատմվածքները անրան ու խելապական կանանց ու տրտնց մասին։ Արժե հիշաաակել, որ Հ. Թումանյանի տաղանդավոր մշակումով հտնրահայտ դարձած «Կիկոսի» ու «Բարեկենդանի» հիմքում ընկած է համշենահայերի «Հայ Գասպար»³⁹։

³⁷ Հ. Ոսկյան, նշվ. աշխ., էջ 171։

³⁸ Տե՛ս Հ. Աճառյանի «Քննություն Համշենի բարրառի» (Երեւն, 1947) ուսումնասիրությունը, որտեղ բերված է Համշենի աղագրության և բանահյուսության մասին հայ պարբերական մամուլի էջերում հրապարակված կարեոր հոդվածների ցանկը։

³⁹ Հ. Թումանյանի մշակումը ժողովրդական պատումի հետ համեմատել կարողանալու համար, ստորեւ բերում ենք երկու հատված «Հայ Գասպար»-ից։

—«Վախ գիտի վախ եիս էշտայի մաղգու, ինձիկի ըլիւր մօնլ մը, օնունը գեեի Գասպար, Գասպար մեծընար, գրկիցներու մօնլերու հիտ խաղեր, հիտըար իղա տեղ գեին, իղա փթած ծառի վրան էլլենին, ծառի ճուղքը փետուիւր, Գասպար ըղնիր տակը մեռնիւր, հապա իմ բօնը ինցօ՞ կըլլիւր, վայ կիտի Գասպար, վայ քեռնար քու մոր ալքեր» («Արարաւ», 1895, էջ 397—398, հմմտ. Աղբյուրի մոտ կիկոսի մոր լաց ու կոծի հետ)։

—«Էն գեանի վրա քելե կու, ունի երկու օտք, կընե մեկ,

Ուշագրութեան արժանի է նաև «Կանչեմ, կը-
ռունկ, կանչեմ» ժողովրդական երգի համշխման
գեղեցիկ փոփոխակը, որի առաջին 6 տողերն են.

Յօրոր դարունը կուգայ, կուկուն կու կօնէ,
Ուրա փուշ պատեցաւ, սիրտս կու խոռչէ:
Կօնչէ, կուկուա, կօնչէ ըստերի լեռներէ,
էշթամ գարիբութիւն, վախիւ մեռնելէ:
Կուկուն էլ թառեցաւ ածուքի պատին,
Աստուած հոգիս առնուր մայրիկիս գոգին...⁴⁰

Համշխման հայկական իշխանութիւնը, ինչպես
սեսանք, դիմադրաւեց Օսմանյան կայսրութեանը
ու կարողացաւ պահպանել կիսանկախ իր դոյու-
թիւնը շուրջ երեք տասնամյակ՝ աւելի, քան Տրա-
պիզոնի հունական կայսրութիւնը:

1489-ին արդեն Համշխման վերջին հայ իշխան
Դավիթը, վտարված իր աիրույթից, հանդիմանել
էր Սպարի ջրջանում, որ ղեկնս դռնվում էր Սղ-
կոյունու փաղիշահների դերիշխանութեան ներքո:
Պետք է ենթադրել, սակայն, որ Համշխման իշխա-
նանիսա դոյուղի դրամութից ու հայ իշխանի փո-
խարեն թուրք վոյվոզի նշանակումից հետո էլ,
ղեկ երկար ժամանակ, իբնց ինքնավար վիճակը
պահպանեցին անմատչելի ու ինքնամիտի այդ
լեռնադավառի հայ ձորապետները: «Այդպիսի
դժվարամուտ լեռանց մեջ,— հենվելով Կ. Կոնս-
տանդուպոլսի վրա դրել է Հ. Տաշյանը,— դու-
րին էր իշխանաց կես-անկախ դոյութիւն մը պա-
հել, նաև օսմանյան աիրապետութեան աակ եր-
կար աւած է այս վիճակը և Քոխ գեղեցիկ կնկա-
րադրե տակավին յուր ուղեորութեան աահն (այ-
սինքն՝ XIX դարի 40-ական թթ.) շարունակվոյ
տյս դոյութիւնը: Կոխ հյուր եղավ վաղուց ի վեր
մահմեդականութիւնն ընդունած մի գերդաստանի
զավակ՝ Զեմիլի շրջանի գերեբեյի (ձորապետի)
տանը, և նրա արտաքինից դատելով նկատեց, որ
«գլխավորաբար հայ արյունն էր հոսում նրա
երակներէ մեջ»⁴¹:

Իրենց կիսանկախ ու ինքնավար վիճակը
պահպանեցին նաև բուն Համշխման դուրս եկած
և հարեան շրջաններում ու Սե ծովի ափամերձ
վայրերում բնակութիւն հաստատած համշխմանի-

էրկու, մեկ, էրկու ու կիսայ. քու ձին ունի շուրս ոտք,
կրնն մեկ, էրկու, իրեք, շուրս, ինչտք դուն շուրս ընիս, էն
մեկ էրկու կասն ու կոնցնի քեզիկի. ինչիւր վեր, ձեզ տուր
ինձիկ, դուն էլ էն մաշդու լոմոն մեկ էրկու երե ու գնա,
ժմենա («Արարաւ», 1895, էջ 400. Հմմտ. «Բարեկենդանի»
հերոսի խրատը խելապակաս տղամարդուն, որ ձիով դուրս
էր եկել հետապնդելու իր կնոջը խարած երիտասարդին):

⁴⁰ Գ. Սրվանձտյանցի գրառումն է (տե՛ս «Մասիս»,
1886, 3824, էջ 963. Հ. Անադյան, նշվ. աշխ., էջ 217—218):

⁴¹ Հ. Տաշյան, Հայ բնակչութիւնը Սե ծովին մինչև Կա-
րին, Վիեննա, 1921, էջ 27:

ները: Չարշամայից ոչ հեռու դանւոդ Կուրշումլի
(Խոտշունլի) ավանի Համշխմանց դաղթած հայ
բնակչութեան մասին, օրինակ, ունենք վկայու-
թիւն XIX դարի սկզբներից, որի համաձայն
ներանք՝ ամենքը «գինվոր դրված են որդւոց որդի.
և ունին դորապետ հայ իշխան, որ գիրենք կը կա-
ռավարե. մարդե ահ շունին. միայն տերեւեկիին
հետ պատերազմ կերթան, և զորավոր մարդիկ
են»⁴²:

Համշխման ու շրջակա դավաւոների հայ աղա-
բնակչութեան վիճակը էական փոփոխութիւն չը-
կրեց XVI դարում: Թուրք դավթիշները կայսրու-
թեան ծայրագավառներում քրիստոնէութեան դեմ
անսանձ հալածանքի ու բռնի մահմեդականացման
իրենց քաղաքականութեան իրադրոժումն սկսեցին
XVII դարի կեսերից:

Համշխման և մերձակա հայաբնակ շրջանների
բռնի մահմեդականացման հետ առնչվող սրտա-
ճմլիկ դեպքերը, անշուշտ, դրանցվել են ժամա-
նակակից և ականատես հիշատակագիրների կող-
մից: Սակայն այդ աղբյուրները անդարձ կորած
են, և ուսումնասիրողները անդրադառնալով այդ
խնդրին, կամա թե ակամա. հետեւ են ազդա-
դրադետ-բանահավաք Ս. Հայկունուն, որը ավան-
դութիւնների հիման վրա շարադրել է Կարա-դե-
րեի հայութեան մահմեդականացման պատմու-
թիւնը, որ նրա կարծիքով տեղի է ունեցել 1708—
1710 թթ.⁴³: Ըստ այդմ, բուն Համշխման հավատա-
փոխութիւնը, կաարված լինելով աասնամյակ-
ներ առաջ, վերաբերելու է XVII դարին:

Համեղենահայութեան վիճակի լավագույն ու-
սումնասիրողներից Պ. Թումայանցը, 1870-ին
կազմած իր անդադրութեան մեջ, հայտնում է, որ
Կարա-դերեի հայերը դաղթել են Սպարից, Բա-
րերդից և, մանավանդ, Համշխմանց՝ «կրոնափոխու-
թենն աղաաելու նպատակով, ասկե դրեթե 170
կամ 180 արի առաջ», այսինքն՝ 1690-ական
թվականներին: «Բավական արիներ ետքը,—շտ-
բունակում է նա,—երր Համշեն դավառը մնացող
ժողովուրդը ամբողջ տաճկացուցին և հալածանքը
Գարա-աերեի վրա դարձաւ՝ հաղարավոր բնաա-

⁴² Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 49:

⁴³ Բունի հավատա փոխութեան առասպելաաոն իր պատ-
մութիւնը Ս. Հայկունին հրապարակել է «Կորած և մոռաց-
ված հայեր. Սե գետացիք» խորագրով հոգվածաշարում («Արա-
րատ», 1895, էջ 239—243, 293—297 և, հատկապես, էջ 239,
240—242): Սյունահտե տպագրվել է «Հայոց նոր վկաներ» ժո-
ղովածուի մեջ՝ «Տեր Կարապետ քահանա Թորոսեցի» վերնա-
գրով (Վաղարշապատ, 1903, էջ 702—709), ինչպես նաե՛ վե-
րապատմած է Հ. Անտոյանի «Քննութիւն Համշխման բարրա-
ոի» աշխատութեան մեջ (էջ 5—8): Հ. Անտոյանը այդ գեպ-
քերը կաարված է համարում 1715-ին:

նիր ամեն բանն զրկված փախսն Տրապիդոնի, Օրտոի, Յունիայի, Չարշամայի, Պաֆուայի. Սինուսի և մինչև Ատուպաղարի դյուղերն ու քաղաքներն»։

Պ. Թումայանցը Ուղի Սամիրա գյուղում տեսել է մի Շարակնոց, որի հիշատակարանում դրոմնցված է ևղևկ Կարա-դերեի հայության բռնի մահմեդականացման պատմությունը։ Յավոք, սուդ հիշատակարանը նրա հոգվածում լրիվ մեջ չի բերված, բովանդակությունը վերապատմված է ալսուկս. «Կարա-տերեի ամրոցը տաճկանալը և վերջին մաս մը մնացողներու սպաննվել և փախչելը՝ Հայոց ՌՄԻԹ (1780) թվին պառահեր է, սակայն հալածումը շատ առաջ սկսեց և ոտք ոտք տոցացելու ու առեկացած հայոց ձեռքով այլ շատ անօրենություններ ու արյունահեղություններ ըլլալն հետո՝ վերոհիշյալ թվականին Գարա-աերեի վերին ծայրը խաղաղ գյուղը վերջացել է, ուսկից փախել է, դիշերայն և այս հիշատակարանը գրող տեր Կարապետ անուն առաքինի քահանան»։

Մերծավորապես նույն ժամանակաշրջանում է կատարվել նաև Ճորոխի հովտում և նրանից հարավ բնակություն հաստատած համշենցիների («խոփե շեմշին» կոչվածների) մահմեդականացումը։ 1887-ին հրապարակած իր մի հոգվածում իսուկով պրանց և Օլթիի շրջանի մահմեդական հայերի մասին, Գր. Արծրունին հայանում է, որ նրանք «60—100 տարի սրանից առաջ», այսինքն՝ շուրջ 1780—1820-ական թվականներին են ընդունել իսլամը⁴⁵։

Ժամանակագրական վերոհիշյալ տվյալները, որքան էլ թեական լինեն, հնարավորություն են ընձեռում եղրականելու, որ համշենահայությունը՝ բուն Համշենում, Կարա-դերեի շրջանում և Ճորոխի հովտում մահմեդականություն է ընդունել առանձնապես անած համառ սլայթալից հետո, որ սկսվելով XVII դ. կեսերից, ավարտվել է, հիմնականում, 1820-ական թվականներին⁴⁶։

⁴⁴ [Պ. Թումայանց], Պոնտոսի հայերը («Լուսալ», 1899, Բ հիթ, էջ 175—177)։

⁴⁵ «Մշակ», 1887, № 5։

⁴⁶ Ավելորդ չէ այստեղ մեջ բերել Համշենից ոչ շատ հետո դանվող Բերդաղրակ (Կիսկիմ) դավառի հայերի մահմեդականացման մասին Կ. Կոխի հաղորդած տվյալները։ Բաղդասելով դրանք Համշենահայության մասին մեր գիտցածի հետ, գալիս ենք այն համոզման, որ ամենուրեք թուրք իշխանությունները նույն քաղաքականությամբ էին առաջնորդում։ «Այս դավառի մահմեդականները,—ասում է Կոխը,—XVIII դարի վերջերին դուք թրստոնյա էին. և դավառի կիսանկախ իշխանը ընկել էր Հավաթի համար մղած կովում։ Սրա որդին մանուկ հասակում տարվել էր Կ. Պոլիս, կրթվել որպես մահմեդական ու վարձվել էր հայրենի իշխանության»։

Այս եղրականության օգտին է խոսում և այն փաստը, որ XIX դարի 10-ական թվականներին այդ վայրերում շրջադարձ Մ. Բժշկյանը «Պաամություն Պոնտոսի» նշանավոր աշխատության մեջ գրում է, թե «Համշենցիք կես կես (այսինքն՝ կես քրիստոնյա, կես մահմեդական՝ ի. իս.) են. շատը դարձած են, բայց քրիստոնեությունը սովորությունը կը պահեն, ժամոց և ողորմությունը պակաս չեն ընել. դրեթե ամենքը Հարդավառին և Վերափոխման կերթան եկեղեցին, մոմ կը վառեն և մասաղ կընեն իրենց պապերուն հոգուն համար»։ Նույնը նաև Կարա-դերեի (Սյուրմենեի) հայության մասին. «Կան ծերեր, որ դիսեն քրիստոնեություն, կը պապին խաչը և ծածուկ ողորմություն կուտան ժամերուն»⁴⁷։

Այդպիսի «կես կես» վիճակի համար շատ բնորոշ են նաև մահմեդականի ու քրիստոնյայի կրկնակ անունները՝ Ալի-Սարդիս Կարապետ-օղլի, Մահմուդ Հովհաննես-օղլի, որ վկայված են այդ հայերի միջավայրում⁴⁸։

Բնականաբար հին սերնդի հետ վերանալու էին քրիստոնեական ծեսերն ու սովորությունները, սանավանդ, որ դրանց դեմ ծրագրված պայքար էին մղում պարտադրվող կրոնի պաշտոնյաները։ XIX դ. վերջին տասնամյակներին արդեն այդ շրջաններում մահմեդականությունն ըստ ամենայնի հաղթանակել էր։ Պ. Թումայանցն, օրինակ, վկայում է. որ համշենցիները «քրիստոնեություն ամեն նշան կորուսած են» և այդ մեծ դավառում միայն նշանավոր Եղնովիա (էլեհովիա) գյուղում է մնացել քրիստոնեությունը պահած քսան ընտանիք⁴⁹։

Միջին դարերում դրեթե ամենուրեք, մանավանդ Օսմանյան կայսրության նման թեոկրատիկ-

ծողովողի մեծ մասի մահմեդական դառնալու սկզբնավորությունը, ինչպես ամենուրեք Մահմեդի վարդապետության տարածումը, այսանդ ևս կատարվել է կոտորածով (Կ. Կոչ, նշվ. աշխ., էջ 75)։

⁴⁷ Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 92—93, 96—97։

⁴⁸ «Մշակ», 1887, № 13, ի. Լինը, իր «Հայաստան» աշխատության մեջ, ուշադրավ տվյալներ է հաղորդում Տրապիդոնից ոչ հետո դանվող մի դյուղի բնակիչների մասին, որոնք մահմեդականություն ընդունած հույներ էին, բայց դեռ պահպանել էին քրիստոնեական շատ սովորություններ. «Նրանք,—գրում է Լինը,—կնքում են իրենց դավաններին, բայց մուլան նույնպես աղոթքներ է կարդում նրանց վրա, ու ամեն ոք կրում է ինչպես քրիստոնեական, նույնպես և մահմեդական անուն, ինչպես Ահմեդ-Ապոստոլ» (Մ. Փ. Բ. Լուսի, Армения, путевые очерки и этюды, II, Тифлис, 1910, стр. 302)։

⁴⁹ «Լուսալ», 1899, Բ դիթ, էջ 156։ Այս Եղնովիա գյուղը ամենից երկար դիմադրեց մահմեդականներին. 1806 թ. միայն գյուղի բնակչության կեսը դարձավ մուսուլման (տե՛ս Լ. Տաշլյան, նշվ. աշխ., էջ 31)։

բոնատիրական մի երկրում, էթնիկական որևէ խմբի ազդալին պաականելությունը որոշելու կարեորագույն հատկանիշը համարվում էր նրա դավանած կրոնը։ Իրենց «մուսուլման» և «օսմանլի» էին կոչում հույն, լազ, վրացի, հայ և այլ ազգությունները մահմեդականություն ընդունած ներկայացուցիչները։ Սակայն համշենահայերը, մահմեդականություն ընդունելուց հետո էլ պահպանեցին, և ըստ մեծի մասին շարունակում են պահպանել, իրենց լեզուն՝ համշենահայ դավա՝նաբարբառը, իրենց բնակավայրերից շաաերի, րնաշխարհի գեաերի, ձորերի ու լեռների հնամենի հայկական անունները ու իրենց ավանդությունները, երգերը, ըառ ու բանը։

Տեղեկություն կա, որ Անատոլիայի շաա շըրջաններում, փաշաների կարգադրությամբ, կարել են հայերեն խոսող հպաաակների լեզուն՝ պարտադրելով թուրքերենը։ Ուժացման բարբառոս այս միջոցը կիրառվե՞լ է արդյոք նաե համշենահայերի միջավայրում, չգիտենք։ Բայց պեաք չէ աարակուեի, որ թուրք կրոնական ու պեաական պաշտոյաները այստեղ ես քաջ գիտակցել են, որ մայրենի լեզուն պահող նորաթուխ օսմանցիները, վաղ թե ուշ, կարող են դառնալ իրենց պապերի հավաքին և մայր ժողովրդի զիրկը։ XIX դ. կեսերին իսլամ ընդունած մի քանի ընաանիք վերսաին քրիստոյա դարձան. այս բանի առաջն առնելու համար մոլլաները ճնշումներ զործադրեցին և փորձեցին արգելել հայերենը, հայաաարարելով, որ «մուսուլմանի համար յոթ հայերեն բառը՝ մեկ հայհոյանք է»։ Կանայք, որ թուրքերեն չգիտեին, մի քանի գյուղերից դադանակներով քշեցին մոլլաներին, իսկ այր մարդիկ, երկյուղ կրելով կոաորածից, ժողով անելով՝ պայման կապեցին. հինդ ոչխար տուգանք տալ իրենց ադային՝ ամեն անգամ հայերեն խոսելու համար⁵⁰։ Սակայն հաշվեհարդարով ու արդելքներով հնարավոր չեզավ փոխել համշենահայերի ընտանեկան լեզուն, և այսօր էլ նրանք պահպանել են իրենց բաղրաոր։ Մի քանի աարի առաջ նշանավոր արեելագեա-լեզվաբան Գ. Դումեզիլը Սաամբուում գրանցել էր Համշենի բարրաոով երեք պաամվածք և ուսումնասիրել այդ բարրաոր՝ հարցուփորձ անելով İsmet Akbiyik անունով հեմշին մի ուսանողի⁵¹։ Սրա պատմածները խոսում փաստեր են այն իրողության, որ այսօր իսկ կենսունակ է համշենահայ բարրաոր շուրջ երկու դար

առաջ բոնի հավաաափոխ եզած համշենցիների նոր սերնդի շրթերին։

Մահմեդականացած համշենցիները ինչ-որ չափով պահպանել են նաե ընտանեկան իրենց կենցաղն ու բնավորությունը. ախանաեաների վկայությամբ նրանք տարրերվում են իրենց հարեանությամբ ապրող մահմեդական հույներից, լազերից ու վրացիներից. քաջարի են, վեհանձն, անխարդախ ու պարզասիրա, չեն խնամիանում ուրիշների հետ և հարեաններից աարանջատվում են իրենց ճեմշիճ անվանումով, որ մատնանշում է ոչ այնքան իրենց հայրենի երկրամասը. որքան հայկական ծագումը։

Ստույգ ավյալներ չունենք հեմշինների թիվը որոշելու։ Անցյալ դարավերջին, մերձավոր հաշիվներով, նրանք 16 հազար տուն էին, «Համշենի և Սե-դետ (Կարա-դերե) դավաոաց մեջ,—գրել է Ս. Հայկունին,—կտն 16.000 չափ հայեր, որոնք մտած որջացած են այնպիսի վայրեր, զավաոակներ, որոնց հարաբերությունը արտաքին դավաոներու հետ խզված էր երկրի գրից ընական պաա՝ ճառներով»⁵²։ Հ. Աճաոյանը հայտնում է, որ 1915 թ. ապրիլյան եզեռնից սուաջ Թյուրքիայում ապրում էին շուրջ 20 հազար քրիստոնյա համշենցիներ. «Ենույնքան կամ ավելի կարելի է գնել մահմեդական հայերին»⁵³,—ենթադրում է նա։

Այս հարցին ավելի հանդամանորեն անդրադարձել է համշենահայերի պաամության ե ազգադրության անխոնջ ուսումնասիրող Բ. Գ. Թոռլաքյանը։ Նրա ավյալներով մինչե առաջին աշխարհամարտը Տրապիզոնի նախկին նահանգում ապրել են շուրջ 65 հազար քրիստոնյա հայեր ե հավանաբար 100 հազարից ավելի մահմեդական համշենցիներ⁵⁴։

Այժմ մի քանի խոսք իրենց պատմական ընօրրանից դուրս եկած ու Սև ծովի թուրքական և կովկասյան ափամերձ շրջաններում բնակություն հասաաած համշինահայերի մասին։

Բուն Համշենի բնական ու աշխարհագրական պայմանները անհազթահաբելի դժվարություններ էին հարուցում անասնապահության ու երկրագործության հեաադա ընդարձակման ու դարդացման համար։ Բնակչության աճը սաիւղում էր

⁵⁰ «Արարաա», 1897, էջ 297, «Լումա», 1899, Բ, էջ 175։
⁵¹ Georges Dumezil, Trois récits dans le parler de arméniens musulmans de Hemsin (,Revus des Etudes Armeniensnes», Nouvelle serie, t. V, 1967, p. 19—35).

Համշինահալերին ասժանակիր աշխատանքով մշակելի փոքրիկ հողամասեր կորղել ղաոթիթափ աւ իաւվարչուտ անտառներից, կամ էւ ապրուատի միջոցներ որոնել հայրենի երկրից դուրս՝ նսր րնակավարեր հիմնելով հարեան շրջաններու ու ալտոդաղթելով հեռավոր երկրներ։

Կարա-դերեի և Խոփաշի շրջաններում հաս-տատված համշենցիների մասին մի քանի խոսք արղեն ասել ենք։ Բուն Համշենին արեելքից ու արեւմուտքից հարեան, րնական ու կլիմայական պայլտններով նույն պաակերն ունեցող այդ շըր-ջանները համշենցիների ուշագրութլումը գրավել են վաղ ժամանակներից, և նրանք, քայլ առ քայլ առաջ շարժվելով, ներթափանցել ու հասատվել են այդ վայրերում, րնականաբար, րախվելով տե-ղացի հին րնակչութլան՝ հուլների ու լաղերի հետ։ Նրանց միջե տեղի ունեցած պատերաղմների մա-սին եղել են ավանդութլումներ, որոնք, գժրախ-տաբար, դրի չեն առնվել”։

Ներթափանցման այդ պրոցեսը մեծ ծավալ է րնդումել հաակապես XVIII դարի կեսերից, երբ րուն Համշենում սկսվել են ռոնադաաութլումները՝ իսլամը ասրածելու համար։ Իրենց հավաքին հավատարիմ մնացած համշենահայերի մի մասը գազթել է Կարա-դերե, մլուաները՝ Տրապիղոն, Օր-դու, Զարշամպա։ Մի քանի ասսնամլակ հեաո, երբ հավատափոխութլան է հարկադրվել նաե Կա-րա-դերեի րնակչութլումը, քաջաբար մարանչող հաղարավոր հայեր լքել են իրենց այդ հանդրվա-նը ես, և ապատվել հեաապնդումից՝ փախչելով ու հաստաավելով Սե ծովի հարավային ափերին՝ Սինոպից մինչև Բաթում։ Այս ողջ ասրածքի վրա համշենահայ րնակավայրեր կային, անշուշտ, մինչև այդ տխուր իրադարձութլումները, րայց նսր դաղթականութլամը հայ տարն ստվարա-նում և ավելի կենսունտկ է դաոնում։

Հ. Աճաոյանը «Քննութլուն Համշնի րարրա-ոի» մեծարժեք ուումնասիրութլան մեջ վիճակա-դրական տեղեկութլումներ է հաղորդում Տրապի-ղոնից մինչև Սինոպ ընկած շրջանների հայ րնակ-չութլան վերաբերլալ, որոնց դերակշիո մասը եղել է համշենցի։

Մեր օրերում համշենահայութլան և, աոհա-ասրակ, պոնաահայութլան XIX դարի վերշի և XX դարի սկղրների պաամութլան և, աոանձնա-պես, աղդաղըութլան ու րանահլուաութլան աա-պարեղում մեղվաջան ու հայրենանվեր դործ է կաաարել և շարունակում է աշխաանլ այդ րնա-զավաոում ևղևոնից մաղապուրծ եղած համշե-նահայ րանահավաք Բարունակ Գրիգորի Թոռլաք-

յանը, որի սուլն մատենաշարով ներկայացվող «Համշենահայերի աղգագրութլումը» աշխաաութլումը հավաստի, ուտի և արժեքավոր նլութերի ժողովածու է. մեծապես օդտակար հետագա ու-սոանասիրողների համար։ Նա արղեն հրատա-րակված իր հողվածների մեջ⁵⁶ ուշագրութլան ար-ժանի փորձ է կաաարել լուսարանելու համշենա-հայութլան պատմութլանը վերարերող և ուտմ-նասիրութլան կարոա շատ հարցեր։

Թուրքական ռոնապետութլան հայահալած քաղաքականութլումը իր րարձրակետին հասավ արլունոուշա Արղուլ Համիդ II-ի դահակալութլան տարիներին. նրա կիրաոած հրեշավոր «միջոցա-ոումները» պետական քաղաքականութլան մա-կարդակի րարձրացվեցին երիտթուրքերի կողմից, որոնք ծրադրեցին և հեաեղականորեն իրակա-նացրեցին Արեմտլան Հայաստանի իաղաղ աղպա-րնակչութլան ցեղասպանութլումը՝ 1915 թ. ապ-րիլլան մեծ եղեոնր։ Թուրքիայի արեելլան նա-հանգներում, րուոր այն վայրերում, ուր դարեր շարունակ ապրում էին հայ դանգվածներ, սրի քաշվեցին հարլուր-հաղարավոր անմեղ մարղիկ՝ ծերոմիներ, կանայք ու մանուկներ. եղեոնի դոհ դարձավ նաև համշենահայութլան մեծամասնու-թլումը։ Իսկ արհավիրքից հրաշքով փրկված սա-կավաթիվ հերոսները, ապաստանելով հայրենի լեո-նածերպերում և խիտ անտաոներում, միավորվե-ցին ու պարաիղանական խմրեր կաղմելով մա-հու և կենաց պալքար մղեցին ցեղասպանների դեմ. հերոսական պալքարով նրանք փրկեցին ասսնլակ հաղարավոր անպաշապան հայերի կլանքը, նրանց աոաջնորդեցին դեպի Ռուսաս-տան։

Վերապրած համշենահայերը, արտագաղթե-րին հիմնականում Սև ծովի կովկասլան ափերը և Ղրիմ, երկրամասեր, ուր, ինչպես ասել ենք ար-ղեն, րնակութլուն էին հասաաանլ հայ դանդված-ներ օրհասական այդ դեպքերից դեոեա հարլու-րամլակներ աուաջ։

Ղրիմի հայկական գաղթօջախի մասին մի

⁵⁶ Բ. Գ. Թառալլյան, Համշենահայեր («Գրական թերթ» 24/5 1968), Նույնի՝ Համշենահայերի և պոնաահայերի րնա-կավայրերն ու թվաքանակը 1914 թ. («Պատմա-րանասի-րական հանդես», 1970, № 2)։ Նույնի՝ Դրվաղներ համշենա-հայերի պատմութլուեից («Բանրեր Երևանի համալսարանի», 1971, № 2)։ Նույնի՝ Էշեր համշենահայերի 17—18-րդ դդ. պատմութլուեից («Պատմա-րանասիրական հանդես», 1972, № 4)։ Նույնի՝ Համշենահայերի մասին («Բանրեր Երեանի արխիվներ», 1970, № 2)։ Նույնի՝ Տրապիղոնի նահանգի հայկական կրթական և կրոնական հասաաութլուները ա-ոաջին համաշխարհային պատերազմի նախօրլակին («Բան-րեր Երևանի արխիվներ», 1977, № 3) ևն։

⁵⁶ «Արարատ», 1895, էջ 296։

շարք աշխատութիւններ կան գրված, ուստի այս-տեղ հարկ չկա շտտ բան ասելու:

Դեռեւս Կոստտնդին Միրանաթին կայսրը դի-աւել է, որ խերսոնացիք (այսինքն՝ Հարավային Ղրիմի ընակիշները) անկաւոզ են ապրել, ճեթե չճանապարհորդեն Ռոմանիա ե լվաճառեն պեշե-նեգներից ձեռք ըերած կաշիներն ու մոմը, ճեթե Ամիսոսից և Փափլադոնիայից, Բուկկլարներից ե Արմենիակոնից անստուններ շտտանան:

Սերտ էին հատկապես Տրապիզոնի ե Ղրիմի տնտեսական կապերը. XIII դ. թերակղզու հարա-վային շրջանները ենթակա էին Տրապիզոնի կայս-րությանը՝ քաղաքական այն կազմակերպության, որի կենսունակութիւնը խարսխված էր հույն, վրացի ե հայ ավաատներերի համադրծակցու-թյան վրա: Ղրիմի տարացեղ ընակչության կազ-մում, վազ ժամանակներից սկսած, հայ տարրը զգալի դեր է կատարել, սակայն թերակղզին, մա-նավանդ նրա վաճառաշահ քաղաքները, հայ ընակչության նորանոր ու ըազմամարդ խմբեր ընդունեցին ու հայաշաա ընակավայրեր դարձան հատկապես սկսած XIII դ. վերջերից:

Ղրիմահայ զազութի ծաղման մասին ավան-դութիւններ պարունակող XVII դ. հանրածանոթ հիշատակարանը մեծ վստահութիւն չի ներշըն-չում: Բնավ լմերժելով Անի մայրաքաղաքից հայ ընակչության ըտզմամարդ մի խմբի Ղրիմ դադ-թած լինելու հնարավորութիւնը, համոզված ենք, որ զրիմահայության հիմնական զանգվածը ըադ-կացած է եղել Տրապիզոնի, Համշենի, Բարերդի, Սպերի ե ընդհանրապես պատմական Հայաստա-նի հյուսիսարեմտյան շրջանից արտադադ-թած ընտանիքներից: Հատուկ քննության արժանի այս խնդրի մանրամասների մեջ լմտնելով, ան-հրաժեշտ ենք համարում նշել, որ ուշազրավ և բս-տույզ ավայններ կան Բարերդից, Երզնկայից ու Բարձր Հայքի այլ շրջաններից Ղրիմ դադթած հա-յերի ե այդ երկրամասերի միջե նւ միջնադարի ընթացքում մշակութային ու տնտեսական ամենա-սերտ կապերի դոյութիւն մասին:

Վստահ կարելի է հայարարել, որ վազ ժա-մանակներից Ղրիմի թերակղզին ծանոթ ու սիր-ված երկրամաս է եղել նաե համշենահայության համար: Մեր այս ենթադրութիւնը կարող էր հաս-տատվել նաե հայ ըարրաոգիտության ընձեռած տվյալներով, եթե մենք ծանոթ լինեինք զրիմա-հայության հին ըարրաոին, որը անդարձ կորած է գիտության համար, քանի որ հին զրիմահայերը զփշազախոս էին դարձել ասկավին XVI դարում: Ինչ-որ չափով, սակայն, այդ ըարրաոի հետքերը պահպանված պեաք է լինեն նոր նախիջանի հայոց ըարրաոի մեջ, որը զարմանալի ընդհան-

րութիւն ունի համշենահայ ըարրաոի հետ՝ բա-զաճայնային իր համակարգով և, մանավանդ, ըրձ-ի ասրօբինակ հնչլունափոխությամը: Միայն այդ երկու դավաոարարաոներում ըրձ-ն լեզ-վաատամնայիններից աոաջ դառնում է ըշ, ինչ-պես, օրինակ, մաշդ || մաշթ (մարդ), եշթալ (եր-թալ), մօշթի (մորթի) ե այն:

Ղրիմի վրայով համշենահայերը միջին դա-բերում պետք է կապված լինեին նաե Ուկրաինա-յի ու Ռուստոտանի հեա: Սկադ. Ն. Մաոը Լազիս-տանում կաաարած գիտական իր ճամփորդության ընթացքում հանդիպել ու զրուցել է մի հեմշինի հետ, որ Ռեել (Տալին) քաղաքում փուռ է ունե-ցել ե մեկ ուրիշի, որ 20 տարի ապրել ու աշխա-տել է Կիեում: Մեծ հավանականությամը այդ եր-թեկը համշինահայության համար ավանդական էր ու խարսխված դաըավոր փորձի վրա:

1860-ական թվականներից արդեն, ըայց ա-վելի մեծ ծավալով 1877—1878 թթ. ոռւս-թուր-քական պատերազմի հադթական ավարաից հետո համշենահայերն սկսեցին պազթել իրենց համար ծանոթ ու հարազատ այդ երկրամասը ու հաս-տատվել Սուխում, Սոչի, Մացեսաա, Լոո, Մժա-րա, Մերելդա, Ադլեր, Շափշուկա, Նոր-Աֆոն, Գադրի ե այլ ընակավայրերում: Հետադայում ծովեզերքից համշենցիներն աոաջացան դեպի Կու-րան ու մի շարք գլուչեր հիմնեցին Մայկուպի ու Եկասերինոդարի (այժմ՝ Կրասնոդար) շրջակայ-քում: Արխադիայում հասաաաված համշենցիների մասին ազդարական արժեքավոր ուսումնասի-րության հեղինակ Հ. Մուրադյանը XX դ. շեմին (համշենահայերի ներգադթից ընդամենը երկու աասնամյակ հետո) այսպես է ընորոշում նրանց դերը այդ երկրամասի տնաեսական զարգացման գործում. «Կարելի է ասել, թե կովկասյան ափե-րի ծաղկելն ու աոաջ դնալը սկսվում է հայ դադ-թականների դալու օրից: Սյդ հաստատապես նը-կատվում է այսօր Սուխումի շրջանում, որ ութսու-նական թվերի սկզբներին, երբ դեռ նոր էին սկսել հայերը դադթել այդ կողմերը, մի աննշան, հետ ընկած, ամայի ու ավերակ տեղ էր. այնինչ այսօր կովկասյան ափերի ամենածաղկած տեղերիցն է, իսկ թութունի արդլունաբերութիւնով՝ աոաջինն է ամրոզ Ռուսիայում...»

Հայերի դալուց հետո՝ ամեն տեղ կովկասյան ափերում, շարժում, կենդանության է ընկնում: Հետզհետե աոաջվան դարերը ճահիճներն ու ան-տառները մաքրվելով, նոր-նոր սիրուն արտեր ու պլանտացիաներ են ըացվում. հարլուրսվոր դես-յատիներով նոր վարելահոդեր են ավելանում այդ վայրի ու խիտ անառներով ծածկված երկրի մեջ: Եվ ամենամեծ մասով այդ ըուրր արաերը

թորբահայերի (իմա՝ համշենահայերի՝ ի. իս.)
ձևորովն են փորվել ու բացվել...»⁵⁷։

Արխաղիայում հասաաաաւած համշենցիների
աւտեսական շինարար զործունեության մասին
ալս անկեղծ ու հիացական աողերր դրանցվել են
շուրջ 7 աւտնամլակ աոաջ, երբ նրանց թիվը,
մոտավոր հաշիվներով, շէր անցնում 15 հաղա-
րիդ։ Թուրքական լաթուղանից փրկված համշենա-
հայության բեկորներր, հաղթահարելով անասելի
դժվարութլուններ, խարիսխ նետեցին իրենց աղ-

ղակիցների կողմից արդեն շենացված այդ երկ-
րամասում, հաջողութլամր մասնակցելով իրենց
նոր հտլրենիքի բարգավաճմանն ի նպաստ թափ-
վող ամենօրլա ջանքերին։

Արխաղիայում և Կրասնոդարի երկրամասում
րնակութլուն հասաատած հայերն ունեն իրենց
դպրոցներն ու մշակութային հաստատութլուն-
ներր և սերտորեն շաղկապված են մալր հայրե-
նիքի՝ Սովետական Հայաստանի հետ։

ՀՍՍՀ ԳՍ. ալադեւիկոս
Լեւոն ԽԱՉԻԿՅԱՆ

⁵⁷ Հ. Մուրադլան, Հաաշենցի հայեր. (արտատպութլուն
«Աղլարական հանդեսիդ»), Թիֆլիս, 1901, էշ 3—4։